ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԿԱՋՄԵԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՋՄԵՑ ԽՍԵՑ ԱՋԱՏ

Էլեկտրատպարան «ՀԱՅՄԷՊ» թղթակ.,
«Մաղաքեան փողոց (176).
տպարան

46
ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԿԱՋՄԵԼ

342
Ս

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

ԿԱՋՄԵՑ ԽՍՆ—ԱՋԱՏ

Հրատարակութիւն Լ. Քնարիանի

Հ 3227
Ա 2869
ՀԱՅԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ № 9
ԱԿԱԴԵՄԻԱ

ԹԻՖԼԻՍ

Եղիշեարաշարժ տպարան «ՀԵՐՄԷՍ» Ընկ. Մադաթեան փող. № 5

1906 (165)

(ԱՐՏԱՏՊԱՏ «ՄՇԱԿԻՑ»)

29

ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ՄՇԱԿԵԼ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

I

ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Անցեալ հոկտեմբերի 17-ի յայտնի մանիֆեստով կառավարութիւնը խոստացաւ Ռուսաստանին սահմանադրական կարգեր տալ։ Սոց.-դեմ. կուսակցութիւնը ցանկանում և պահանջում էր, որ այդ սահմանադրական կարգերը մշակվեն երկրի բոլոր ժողովուրդների կողմից ընտրված պատգամաւորների ժողովում, սակայն բիւրոկրատական կառավարութիւնը չը համաձայնեց այդ բանի հետ և որոշեց սահմանադիր ժողովի փոխարէն Պետական Դուման հրաւիրել, ասելով որ նրա պարտականութիւնը պէտք է լինի սահմանադրութիւն մշակել։ Խնդիրը, ի հարկէ, անունի մէջ չէ՝ սահմանադիր ժողով թէ Պետական Դուման այդ միևնոյն է. ամենաէական խնդիրը նրանում է, թէ ինչպէս կը լինի կազմված այդ ժողովը, ովքեր կը լինեն պատգամաւորները, ումից և ինչպէս կը լինեն նրանք ընտրված։ Բանը նրանումն է, որ բիւրոկրատիան կամ մինիստրութիւնը, ժողովրդային մեծ շարժումներից վախեցած ինքն էլ կարող է մի որ և է սահմանադրութիւն մշակել, սակայն բիւրոկրատիայի մշակած սահմանադրութիւնը երբէք չէ կարող ժողովրդի բոլոր խաւերին, մանաւանդ գիւղացիներին և բանւորներին լիակատար բաւարարութիւն տալ։ Բանւորներին ցան-

կալի է որ սահմանադրութիւնը ամենաընդարձակ քաղաքական իրաւունքներ տայ ամբողջ ժողովրդին և որ ամեն մի քաղաքացի, ով որ էլ լինի նա, հաւասար իրաւունքներ ունենայ միւս բոլոր քաղաքացիների հանդէպ։ Բայց բիւրոկրատիան, ի հարկէ, այդ չէ ցանկանում, որովհետև նա երբէք ինքնակամ կերպով չի զիջանի իր իրաւունքները ուրիշներին և, իր սեփական շահերը թողած, ուրիշների շահերը չի պաշպանիւ Անկեղծութեամբ երկրին սահմանադրութիւն տալու դէպքում, բիւրոկրատիան չը պէտք է խառնվի նրա մշակման գործում, որովհետև մի՞թէ գիւղացիները իրանց գաւառապետին կամ հողատէր աղային պէտք է հարցնեն, թէ ինչպէս իրանք պէտք է պաշտպանվեն նրանց բռնութիւնների ու ճնշումների դէմ։ Իսկ ինչ որ գաւառապետն ու հողատէր աղան են իրանց շրջանում, նոյնն են մինիստրներն ու բարձրաստիճան իշխանաւորները ամբողջ երկրի վերաբերեալ։ Գիւղացիները ու բանւորները չեն կարող նոյնպէս վստահանալ և այն սահմանադրութեանը, որ կրմշակեն այնպիսի պատգամաւորներ, որոնք ընտրված կը լինեն ոչ թէ ամբողջ ժողովրդի, այլ միայն կրթված և ունևոր դասակարգերի կողմից։ Այս դէպքում էլ երբէք չեն պաշտպանվի ժողովրդի ստորին խաւերի շահերն ու իրաւունքները, որոնք ոչ նիւթական կարողութիւն ու ոչ էլ կրթութիւն ունեն։ Սոց.-ռամկավարական կուսակցութիւնը պահանջում է, որ սահմանադրութիւն մշակող ժողովը լինի համաժողովրդային, այսինքն՝ ընտրված լինի ամբողջ ժողովրդի կողմից համահաւասար իրաւունքներով։ Նա նոյնպէս պահանջում է, որ այդ ընտրութիւնները կատարվեն ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի քուէարկութեան հիմունքների վրա։ Միմիայն այս դէպքումն է որ աշխատաւոր ժողովուրդը կարող է լիակատար կերպով պաշտպանել իր շահերը։ Եւ որովհետև ժողովրդի քաղաքական գիտակցութիւնից ու իր

շահերի լաւ ըմբռնելուց է կախված այն հանգամանքը, թէ նա ինչ աստիճան կօգտվի իր իրաւունքներից. ուստի Սօց.-դեմ. կուսակցութիւնը դրա համար էլ շատ մեծ նշանակութիւն է տալիս աշխատաւոր դասակարգի գիտակցութիւնը զարգացնելու գործին։ Որչափ զարգացած լինի քաղաքականապէս մէկը, այնչափ էլ նա լաւ կարող է օգտվել ամեն հանգամանքներից յօգուտ իր դասակարգային շահերի։ Պէտք է շատ լաւ գիտենալ, որ ռամիկ ժողովրդի թշնամիները հազար տեսակ խարդախութիւնների են դիմում, որպէս զի նրան զրկեն իր իրաւունքներից •գտվելու կարելիութիւնից։ Պատահում է, որ թղթի վրա ամեն ինչ շատ կարգին է, սահմանադիր ժողովի գումարումն է յայտարարված, յայտարարված է և այն, որ այդ ժողովը պէտք է ընտրվի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի բուէարկութեամբ։ Մինչդեռ շնորհիւ մի շարք մանր, աննկատելի խարդախութիւնների և շնորհիւ այն պայմանների, որոնց մէջ դրված են լինում ընտրութիւնները, դուրս է գալիս որ ժողովուրդը զրկված է այն իրաւունքներից, որոնք թղթի վրա նրան են պատկանում։ Թեպէտ այդ բոլոր խարդախութիւնները անհնարին է։ Բացի դրանից՝ միշտ նորերն էլ են հնարվում, այնպէս որ ընտրութիւնների ժամանակ հարկաւոր է միշտ ականջը սուր պահել և հետևել հակառակորդների հնարած դարձվածներին։ Այնուամենայնիւ, կարելի է մի քանի ձևեր կանխաւ նախատեսել. և հէնց դրա մասին է որ մենք կը խօսենք հիմա։

II

ՆԱԽԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱ

Ով եղել է որ և է ժողովում—լինի քաղաքային, քանաւորական, կամ հաւայնական—նա անշուշտ դիտէ,

թէ որ ատիճան մեծ դեր են խաղում և կարևոր են այնպիսի մարդիկ, որոնք մոռանալով իրանց մինչև իսկ անձնական բարեկեցութիւնը, ամբողջապէս նուիրված են հասարակական գործին, շարունակ ժողովրդի գործերի մասին են մտածում ու նրա հոգսերով տառապում։ Այդպիսի մարդը միշտ կարող է ժողովականներին պարզաբանել նրանց հետաքրքրող հարցը, բացատրել թէ ինչպէս աւելի օգտակար է կարգադրել այս կամ այն ձեռնարկը, լուսաբանել այն բոլոր խնդիրները, որ քիչ առաջ մութ և անհասկանալի էին։ Նոյնպէս յայտնի է, որ իշխանութիւնը, զանազան աղանները, նոյնիսկ հոգևորականութիւնը և այլ տեղական պղտոր ջրի մէջ ձուկ որսողները շատ էլ չեն սիրում այդ կարգի «անհանգիստ» մարդոց, որոնք թշուառների շահերն են պաշտպանում և ամեն կերպ աշխատում են դրանց մէջտեղից վերացնել, նրանց ձայները կտրել։ Եթէ նրանց չէ աջողվում այդ «վատ վարքի տէր» մարդոց մի որ և է կերպ մրոտել ու դատարանի միջոցով «հեռաւոր» աքսորավայրերը ուղարկել, այն ժամանակ ադմինիստրացիան միշտ մի որ և է առիթ գտնում է՝ նրանց «ոչ այնքան էլ հեռաւոր» նահանգները ուղարկելու, վարչական եղանակով, իբրև «կասկածելի» անձնաւորութիւնների, մանաւանդ որ զինուորական կամ խիստ պաշտպանութեան դրութիւնը ադմինիստրացիայի կամայականութեանը կատարեալ ազատութիւն է տալիս։ Ո՞ւմ յայտնի չէ, թէ ինչպէս օր օրի վրա տասնեակ հազարաւոր ամենազարգացած ու ամենագիտակից քաղաքացիներ, որոնց կառավարութիւնը «քաղաքական յանցաւոր» անունով է կոչում, ձերբակալվում բանտերն են նետվում, Սիբիրի աքսորավայրերը, տաժանակիր աշխատանքի են ուղարկվում, կախաղանի վրա են բարձրացվում և կամ ուշակի գնդակահարվում են։ Ռուսաստանի ժողովուրդը, բիւրոկրատիայի ինքնիշխանութեան շնորհիւ,

բոլորովին հեռացված է պետական գործերի մէջ մասնակցութիւն ունենալուց. այդ գործերը ժողովրդին հասարեա թէ անծանօթ են։ Իրեն ըստինքեան հասկանալի է ուրեմն, որ որպէսզի ժողովուրդը կարողանայ ճշտութեամբ ընդունել այդ բարդ գործերը, հասկանալ, թէ արդեօք ո՞ւմ պէտք է ընտրել սահմանադրութիւն մշակելու համար, չափազանց անհրաժեշտ է, որ բոլոր այն մարդիկը, որոնք շատ են մտածել հասարակական գործերի վրա, դիւրութիւն ստանան ժողովրդի հետ խօսելու, նրան ժամանակաւոր բացատրելու և հասկացնելու այն բոլոր խնդիրները, որոնք վերաբերում են քաղաքական ազատութեանը։ Ահա թէ ինչու, նախ քան ընտրութիւնները նշանակելը, անհրաժեշտ է պահանջել կատարեալ ամնիստիա այն բոլոր աքսորվածների ու բանտարկվածների համար, որոնց կատարած «յանցանքը» ոչ միայն արատ չէ բերում մարդուն, այլ ընդհակառակը յայտնվում է իբրև արտայայտութիւն ազնիւ բողոքի ընդդէմ ներկայ կարգերի։ Բայց բաւական չէ միայն այդ մարդոց ազատ արձակելը. հարկաւոր է նրանց և միջոց տալ գնալու այնտեղ, ուր նրանք հարկաւոր են։ Եթէ մէկին քշել են հազարաւոր վերստ հեռաւորութեան վրա, ինչ նշանակութիւն ունի նրա համար ազատութիւնը, եթէ փող չունի այնտեղից հեռանալու։ Պէտք է ուրեմն պահանջել, որ ամնիստիա հրատարակելով հանդերձ, կառավարութիւնը բոլոր ազատվածներին միջոցներ տայ իսկոյն գնալու այնտեղ, ուր իրանք կը ցանկանան։ Ի հարկէ, ոչ ոք չը պէտք է մտածէ անգամ ընակչութեան սահմաններ գծել, ու ասել թէ՝ դու իրաւունք ունես այս ինչ և այն ինչ քաղաքներում ապրել միայն։ Ոչ միայն բանտերից ու աքսորից ազատվածների համար, այլ և Ռուսաստանի բոլոր քաղաքացիների համար պէտք է ոչնչացվեն այս կամ այն շրջանում ապրելու կամ շրջելու սահմանափակումները, ինչպէս

օրինակ, գոյութիւն ունեն հրէաների և մի քանի ազանդաւորների համար։ Ինքնըստինքեան նոյնպէս հասկանալի է որ ռատիկանութիւնը և առհասարակ ադմինիստրացիան պէտք է անմիջապէս զրկվեն՝ իրանց չը հաւանած մարդոց հետ կամայականութեամբ վարվելու իրաւունքից։ Պատերազմական դրութիւնը պէտք է վերացնել անպատճառ։ Բոլոր դատաստանական գործերը, որ յարուցված են «քաղաքական յանցանքների» համար, պիտի խնդրն դադարեցվեն։ Ամեն կարգի գործերի համար պէտք է հատատովի երդվեալների դատարան, որ ընտրված կըլինի ժողովրդի բոլոր խաւերից, և ոչ ոքի չը պէտք է ձերբակալեն առանց այդ դատարանի թոյլաւութեան։ Այլապէս շատ հեշտ կը լինի ընտրութիւններ կատարելու օրերերում ձերբակալել «անհանգիստ» մարդոց և յետոյ արձակել նրանց, ասելով թէ՝ դա «սխալի» կամ «թիւրիմացութեան» արդիւնք էր։

Ոչ պակաս կարևոր է, որ մինչև ժողովի ընտրութիւնները մամուլի կատարեալ ազատութիւն տրվի։ Ժողովրդի կարիքները պարզելու համար, տպագրական ազատ խօսքը միանգամայն անհրաժեշտ է։ Հռետորը կարող է խօսել հազարաւոր մարդերից կազմված ժողովում, իսկ տպագրական թերթը կարելի է տարածել հարիւր հազարներով ամբողջ երկրում և այդպիսով երկրի բոլոր ժողովուրդները կարող են մի տեսակ համաձայնութեան գալ։ Հէնց դրա համար էլ անհրաժեշտ է, որ ամեն մարդ իրաւունք ունենայ ազատ կերպով տպագրել, ինչ որ ցանկանում է։ Կառավարութեան կողմից ոչ մի արգելք չպիտի դրվի գրքեր, ամսաթերթեր, լրագիրներ, թռուցիկներ և այլն հրատարակելու, ծախելու, ամենուրեք ցրվելու և կարդալու համար։ Հիմա ոչ միայն թոյլ չէ տրվում ձրիաբար գրքեր, լրագիրներ ու թերթեր ցրվելը, այլ և գրավաճառութիւն անգամ չէ արելի անել, առանց կառավարութեան թոյլ-

սովութեան։ Բացի դրանից՝ անպին քանակութեամբ դրքեր ու թերթեր կան, որ հիմա չեն թույլատրվում ժողովրդական դրադարաններում ու ընթերցարաններում ունենալ։ Այս կարգի բոլոր սահմանափակումները պէտք է իսպառ վերացվեն։ Բայց որչափ էլ գօրաւոր լինի տպագրական խօսքի ազատութիւնը, այնուամենայնիւ միայն դրանով չէ կարելի բաւականանալ։ Անհրաժեշտ է կենդանի խօսքը։ Անհրաժեշտ է ունենալ և գումարումներ ու բնկերութիւններ կազմելու անսահման ազատութիւն։ Հարկաւոր է, որ բոլորն էլ իրաւունք ունենան միասին հաւաքվելու երբ, որտեղ և ինչ քանակութեամբ որ կամենան։ Հարկաւոր է որ ոչ որի համար այդ ժողովների մուտքը արգելված չը լինի, մինչդեռ հիմա ժողովների մուտքը շատերին արգելվում է, մանաւանդ անչափահասներին։ Ընդհակառակը սրանց ներկայութիւնը ժողովրդական ժողովներում շատ օգտակար է, որովհետև նրանք այնտեղ սովորում են ընտելանալ պետական ու հասարակական խնդիրներին և պատրաստվում են դիտակից ու իրանց իրաւունքը ճանաչող քաղաքացիներ դառնալու։

Ժողովները պէտք է թույլատրվեն ամենուրեք, այսինքն՝ թէ շինութիւնների մէջ և թէ բացօդեայ։ Այս վերջին տեսակի ժողովներն անգամ արգելվում են և այդպիսով բանուորները, որ անկարող են ժողովարանների համար վարձ վճարել, մեծ դժուարութիւնների մէջ են ընկնում։ Երբեմն էլ արգելում են կառավարչական հիմնարկութիւններից մի որոշ հեռաւորութեան վրա։ Բոլոր այդ կարգի քմահաճ արգելումները միայն մի նպատակ ունեն՝ դժուարացնել ժողովների գումարումը, ուստի և պէտք է դրանց միանգամայն վերացնել։

Ի հարկէ, ծածկված շէնքի մէջ էլ ժողովները պէտք է ազատ կերպով գումարել. թէ մասնաւոր տներում, թէ հրապարակներում և թէ սրճարաններում քաղաքացիք իրաւունք պիտի ունենան գումարվել, ա-

ռանց մի որ և է արգելքի։ Եւ որպէսզի մեծ ժողովներ գումարելու համար շէնք գտնելու դիւրութիւն տրվի, պէտք է պահանջել, որ բոլոր հասարակական ու կառավարչական հիմնարկութիւնները, պարապմունքները դադարելուց յետոյ, տրամադրելի լինեն ժողովների համար։ Այսպէս օրինակ՝ պէտք է թոյլ տալ ժողովներ գումարելու թէ քաղաքի և թէ կառավարչական պաշտօնավայրերում, ուսումնարաններում, եկեղեցիներում և այլն և այլն։ Բացի դրանից՝ այդ շինութիւնները պէտք է տրվեն բոլոր ցանկացողներին այն կարգով, ինչ հերթով որ դիմում եղած լինի, այլապէս կառավարութիւնը միշտ կարող է այս կամ այն իրան համար անհաճոյ, կուսակցութեանը շէնք չը տալ։

Այս էլ ասելու է, որ ժողովները պիտի գումարվեն, առանց ոստիկանական թոյլտուութեան, և, ի հարկէ, ոստիկանութիւնը ոչ մի իրաւունք չը պիտի ունենայ ժողովներին միջամտելու։ Ժողովը ինքը կընտրի իր նախագահին ու սրա օգնականներին, որոնք և կը հսկեն կարգի պահպանութեանը։ Մինչև անգամ ոստիկանների համար ժողովի մուտքն իսկ արգելված լինելու է։ Շատ երկրներում, որտեղ իրը թէ գումարումների «ազատութիւն» կայ, ոստիկանները միշտ ներկայ են գտնվում ժողովին, և առանց բաշվելու, փակում են նրան, երբ նկատում են, որ հռետորները շատ ազատ ոգով են խօսում։ Ոստիկանների համար ժողովի մուտքը արգելելու է և այն հիման վրա, որ մեզանում ժողովրդի անգրագիտութիւնը իր կեանքում առաջին անգամն է քաղաքական ժողովներում ներկայ գտնվելու, և նրանցից շատերի մէջ դեռ շատ զօրաւոր է սովորական վախը ոստիկանութիւնից և իշխանաւորներից. ուստի կը զգուշանան նրանց ներկայութեան ազատ կերպով իրանց կարծիքը յայտնել։ Եւ յիրաւի, մինչ գիւղացիներից շատերը կը լինեն, որ գաւառապետի կամ իրանց գիւղական ազայի ներ-

կայութեան համարձակվեն ժողովում ազատ կարծիք յայտնել։

Այս բոլոր մի առ մի թուած պայմանները ճշտութեամբ կատարելով միայն կարելի կը լինի բնտրողական ագիտացիա անել և գումարելիք սահմանադիր ժողովի համար ազատ կերպով պատգամաւորների ընտրութիւն կատարել։

Կայ և մի այլ շատ կարևոր խնդիր, այդ այն է, որ չափազանց անհրաժեշտ է, որ զինուորներն էլ իրաւունք ունենան, առանց իրանց իշխանութիւնից թոյլատրութիւն խնդրելու, մասնակցել նախընտրողական ժողովներին։ Պէտք է որ զինուորներն էլ իմանան, թէ ինչ է ցանկանում ժողովուրդը, և պէտք է որ ժողովրդի հետ միասին նրանք էլ մասնակցեն պետական գործերում։ Այդ ժամանակ այնքան էլ հեշտ չի լինի զորքին ժողովրդի վրա յարձակեցնել, ինչպէս այդ տեղի է ունենում այսօր։ Ահա թէ որքան պայմաններ են անհրաժեշտ, որպէսզի ապահովված լինի ընտրողական ագիտացիայի ազատութիւնը, որպէս զի ժողովուրդը կարողանայ բոլորովին գիտակցաբար վերաբերվել այն բանին, թէ ում պէտք է ուղարկել իրրև պատգամաւոր, սահմանադրութիւն կամ երկրի համար հիմնական օրէնքներ մշակելու համար։ Բայց այդ էլ դեռ քիչ է։ Դեռ բաւական չէ գիտակցել թէ ում պէտք է ընտրել, հարկաւոր է և միջոց ունենալ այդ ընտրութիւնները ազատութեամբ կատարելու։

III

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Ընտրութիւնները ընդհանրապէս կատարվում են հետևեալ կերպով.—Ամբողջ երկիրը բաժանվում է բնտրողական շրջանների։ Ընտրողական շրջանը

յարմարեցվում է կամ արդէն գոյութիւն ունեցող բաժանումին այնպէս, որ, օրինակի համար, ամեն մի գիւղական համայնք կամ ամեն մի քաղաքամաս կազմում է մի առանձին ընտրողական շրջան, և կամ ընտրողական շրջանը որոշվում է բնակիչների թուի համաձայն, առանց ի նկատի առնելու արդէն գոյութիւն ունեցող բաժանումները, այնպէս որ, այս պարագայում, մի և նոյն գիւղական համայնքի կամ քաղաքամասի զանազան մասերը կարող են զանազան ընտրողական շրջանների մէջ մտնել, ինչպէս և գիւղական մի քանի համայնքների մասերը կարող են նոյնպէս մի և նոյն ընտրողական շրջանի մէջ մտնել։ Ամեն մի ընտրողական շրջան ընտրութիւնները կատարում է առանձին և բոլորովին անկախ միւս շրջաններից։ Իւրաքանչիւր ընտրողական շրջանի համար ընտրողների ցուցակ են կազմում, այսինքն այն անձերի ցուցակը, որոնք ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն։ Այդ ցուցակը պէտք է յայտարարվի ի գիտութիւն ընդհանուրի, պետք է տպված և կախված լինի ամեն տեղերում, ուր ժողովուրդ է հաւաքվում. հրապարակներում, գիւղական դատարաններում, գործարաններում և այլն, որպէսզի ամեն մի ընտրող հնարաւորութիւն ունենայ տեսնելու, թէ արդեօք իր անունն էլ մտցված է այդ ցուցակի մէջ, և եթէ ոչ, պահանջէ որ մտցնեն։ Ընտրութիւններից առաջ զանազան քաղաքական կուսակցութիւններ, կամ նոյն իսկ առանձին անհատներ, իրանց թեկնածուներն են առաջարկում, այսինքն՝ յայտարարում են այն մարդկանց անունները, որոնց պատգամաւոր ընտրվելը նրանց համար ցանկալի է։ Թեկնածուները, ի հարկէ, պէտք է ծանօթացնեն ընտրողներին թէ ինչպէս են իրանք հասկանում ժողովրդի շահերը և ինչպիսի հիմնական օրէնքներ պէտք է պահանջեն սահմանադրութիւն մշակող ժողովում։ Դրա համար թեկնածուները

շրջում են ընտրողական շրջանը, ճառեր են խօսում ընտրողների առաջ և տպագրված յայտարարութիւնն՝ ր են ցրվում, որոնց միջոցով նրանք ընտրողներին ծանօթացնում են իրանց ծրագրի, հայեացքների և դիտաւորութիւնների հետ։ Նախօրօք նշանակվում է ընտրութիւնների օրը և տեղը։ Ընտրութիւնների սրահի մուտքը ազատ պէտք է լինի հասարակութեան առաջ, որպէսզի սա կարողանայ հսկել ընտրութիւնների կանոնաւորութեան վրա և որ ապօրինի մեքենայութիւններ տեղի չունենան։ Նոյն այդ նպատակի համար, հարկաւոր է, որ բոլոր քաղաքական կուսակցութիւնների ներկայացուցիչները մասնակցութիւն ունենան ընտրողական բիւրօի իէջ, այսինքն այն մարմնի մէջ, որին յանձնված է ընտրութիւնները ղեկավարել, որովհետև նոյն այդ ընտրութիւնները ղեկավարող չինովնիկները կարող են խարդախութիւններ կատարել յօդուտ այն կուսակցութիւնների, որոնք հաճելի են կառավարութեանը և ՀԷասակար ժողովրդին։ Ամեն մի ընտրող ստանում է անուանական տոմս, որով վաւերացվում է թէ նա իրաւունք ունի ընտրութիւններին մասնակցելու։ Քուէարկելու ժամանակ այդ տոմսակը ներկայացվում է բիւրօին, որ ընտրողական ցուցակի մէջ նշանակում է, թէ այսինչ մարդը արդէն քուէարկել է։ Անուանական տոմսակը ուրիշին տալը, ուրիշի փոխարեն քուէարկելը առհասարակ չէ թոյլատրվում, որովհետև այդ ձևով կարելի է շատ բան ի չարը գործ դնել. հարուստները փողով կը գնեն աղքատներից քուէարկելու իրաւունքը և այդպիսով իրանց ձեռքը կը գցեն բոլոր ընտրութիւնները։

Ընտրութիւնները կատարվում են ընտրողական բիւլլետենների, այսինքն՝ յատուկ թերթիկների միջոցով, որոնց վրա տպված են թեկնածուների անունները։ Այդ թերթիկների վրա տպված են լինում կամ բոլոր թեկնածուների անունները, կամ թէ ամեն մի կու-

սակցութիւն, որը իր յատուկ թեկնածուն է ներկայացնում, տպում է իր առանձին թերթը, վրան նշանակելով միայն իր թեկնածուի անունը։ Առաջին դէպքում ընտրողը ջնջում է բոլոր թեկնածուների անունները, բացի այն մարդու անունից, որին ինքը ցանկանում է քուէ տալ։ Իսկ երկրորդ դէպքում, բոլոր ընտրողներին բաժանվում է իւրաքանչիւր կուսակցութեան թերթիկներից, որից յետոյ քուէարկողից է կախված, թէ ո՞ր կուսակցութեան թերթից կը օգտվի և ո՞ւմ քուէ կը տայ։

Այն դէպքում, երբ միևնոյն թերթի վրա են տպագրված բոլոր թեկնածուների անունները, ընտրողական բիւրօն ընդհանրապէս ճիշտ ընտրութիւնների ժամանակ է բաժանում այդ թերթիկները, իւրաքանչիւր ընտրողին մի թերթիկ տալով։ Եւ եթէ քուէարկութիւնը գաղտնի է, ընտրողը մտնում է մի առանձին սենեակ, ուր նա մնում է բոլորովին միայնակ, որպէսզի ոչ ոք չը կարողանայ տեսնել, թէ նա ո՞ւմ անուններն է ջնջում և ո՞ւմը թողնում։ Երբ այդպիսով բիւլլետէնը պատրաստ է, բիւրօն կանչում է ընտրողին և սա բիւրօի ու հասարակութեան աչքի առաջ է իր թերթիկը գցում քուէտուփի մէջ, որպէսզի ոչ ոք չը կարողանայ մի քանի բիւլլետէն միասին գցել։ Այս բոլորը, ի հարկէ, կատարվում է, ինչպէս ասացինք, այն դէպքում միայն, երբ քուէարկութիւնը գաղտնի է. իսկ եթէ նա գաղտնի չէ, այն ժամանակ ընտրողին պարզապէս հարցնում են թէ՝ ո՞ւմն է նա տալիս իր քուէն, և կամ թէ, ինչպէս անում են գիւղական ժողովների ժամանակ, պարզապէս ասում են՝ ով ցանկանում է այս ինչին ընտրել, թող ձեռք բարձրացնի, իսկ ով համաձայն չէ, թող մի կողմ քաշվի։

Երբ բոլոր ընտրողները իրանց բիւլլետէնները քուէտուփի մէջ գցում, վերջացնում են, այն ժամանակ սկսում են հաշուել, թէ իւրաքանչիւր թեկնածուի հաւասար քանի քուէ է տրված։ Այդ հաշիւը պէտք է կա-

տարել ընտրութիւններից անմիջապէս յետոյ, թէկուզ գիշերվայ ուշ ժամն էլ լինի։ Նոյնպէս անհրաժեշտ է, որ դա կատարվի հասարակութեան ներկայութեան և բոլոր կուսակցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ։ Ամենից շատ քուէ ստացողը իսկոյն և եթ ընտրված է յայտարարվում։

Կան այնպիսի կանոններ, որ ընտրված լինելու համար բաւական չէ տրված ձայների կէսից աւելին ստացված լինի։ Ենթադրենք, օրինակի համար, թէ քուէարկողները 1000 հոգի են եղել. Յովհաննէսին տուել են 450 ձայն։ Տրդատին 300, իսկ Պետրոսին 250 ձայն։ Եթէ ընտրութիւնները կատարվում են ձայների հասարակ մեծամասնութեամբ, այն ժամանակ Յովհաննէսին ընտրված պէտք է համարել։ Իսկ եթէ ընտրված լինելու համար պահանջվում է՝ բոլոր տուած ձայների կէսից աւելին ունենալ, այդ պարագայում վերոգրեալ թեկնածուներից և ոչ մէկը ընտրված չէ կարելի համարել։ Այսպիսի դէպքում նոր ընտրութիւն—կրկնաքուէարկութիւն է նշանակվում երկու առաւելագոյն քուէներ ստացող թեկնածուների մէջ, մեր օրինակով Յովհաննէսի և Տրդատի մէջ։ Պարզ է որ կրկնաքուէարկութեան ժամանակ այն անձինք, որոնք առաջին անգամ իրանց քուէները Յովհաննէսին ու Տրդատին էին տուել, դարձեալ նրանց կը տան իրանց քուէները։ Իսկ թէ վերջապէս ով կը լինի ընտրված, —այդ կախված կը լինի այն հանգամանքից, թէ արդեօք ում կը տան իրանց քուէները Պետրոսի կողմնակիցները։ Եթէ նրանք իրանց բոլոր ձայները տան Տրդատին, այն ժամանակ կրկնաքուէարկութիւնից յետոյ սա կը ստանայ 550 ձայն, իսկ Յովհաննէսը կը մնայ իր 450 ձայնով։ Ուրեմն, ընտրված կը լինի Տրդատը, թէև առաջին քուէարկութեան ժամանակ նա Յովհաննէսից պակաս ձայն էր ստացել։ Այսպիսով քուէարկութիւնների հետևանքը կախված է այն ընտ-

բողներից, որոնք ամենաքիչ քուէ ստացող թեկնածուներին էին տուել իրանց ձայները, ուստի և այդ ընտրողները հնարաւորութիւն ունեն խելացի կերպով օգտուելու այդ հանգամանքից։ Օրինակի համար, եթէ Պետրոսը եղել է բանուորների թեկնածուն, բանուորները կարող են ասել, մեզ չը յաջողվեց մեր թեկնածուին անցկացնել, բայց կրկնաքուէարկութեան ժամանակ մեր ձայները կը տանք նրան, ով կը խոստանայ սահմանադիր ժողովում ռամկավարական կարգեր պահանջել։ Եւ եթէ Տրդատը խոստանայ այդպիսի պարտաւորութիւն իր վրա վերցնել, մենք նրան կընտրենք կրկնաքուէարկութեան ժամանակ, այլապէս թող նա մեզանից ոչ մի օգնութիւն չը սպասի։

Կրկնաքուէարկութեան ժամանակ նոյնպէս մեծ նշանակութիւն ունեն և այն ընտրողները, որոնք առաջին ընտրութեան ժամանակ զանազան պատճառներով չէին մասնակցել ընտրութիւններին։ Քանի որ ժողովուրդը դեռ պարզ կերպով չէ ըմբռնել, թէ ինչ մեծ նշանակութիւն ունեն իր համար պետական կարգերը, շատերը չեն մասնակցում ընտրութիւններին, ասելով թէ՝ դա իմ գործը չէ, ես իմ տնային դրաղումները ունեմ, տանս կոտրը պէտք է նորոգեմ և այլն։ Նա էլ չէ հասկանում, որ իր տնային և այլ գործերի վատ դընալու պատճառը հէնց այն է, որ պետական գործերը վարող մարդիկ ամենածանր հարկերը դնում են ժողովրդի վրին, իսկ հարուստներին ազատում են շատ հարկերից, ժողովրդին պահում են խաւարի, տգիտութեան մէջ, իսկ հարուստների համար շինում են դրադարաններ, մուզէյներ, համալսարաններ. ժողովրդին զրկում են ամեն իրաւունքներից, իսկ հարուստներին ամեն տեսակ արտօնութիւններ են շնորհում։

Քուէարկութիւններին չը մասնակցելը մեծ չարիք է, դա ժողովրդի տհասութիւնն է ապացուցանում։ Հարկաւոր է բոլորին և իւրաքանչիւրին, նամանաւանդ

բանուորներին ու գիւղացիներին լաւ հասկացնել, որ նա պարտաւոր է գնալ ընտրութիւններին և ձայն տալ իրանց շահերը պաշտպանող թեկնածուներին։ Եթէ առաջին ընտրութիւնների ժամանակ չը յաջողվեց բոլորին հասկացնել և քնից սթափեցնել, հարկաւոր է կրկնաքուէարկութեան ժամանակ արթնացնել նրանց խիղճն ու գիտակցութիւնը։ Կրկնաքուէարկութեան ժամանակ բանուորական թեկնածուին հարիւր թէ բանուորներից զատ մի ուրիշը քուէ տայ, ուստի երբ բանուորական թեկնածուն կրկնաքուէարկութեան է ենթարկվում, նրան կարող են օգնութեան հասնել միայն այն բանուորները, որոնք առաջին ընտրութիւններին չէին մասնակցել. կրկնաքուէարկութեան գալով նրանք իրանց թեկնածուին նոր քուէներ կը տան։

IV

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Ռուսաստանի Սոց.-դեմոկրատիական կուսակցութիւնը պահանջում է, որ բոլոր ընտրութիւնները սահմանադրական ժողովների և այլ տեղական ինքնավարական հաստատութիւնների (քաղաքային դումաները, զեմստվոները, գիւղական համայնքները և այլն) համար, ինչպէս և սահմանադիր ժողովի համար, կատարվեն ընդհանուր, հաւասար, ուղղակի ու գաղտնի քուէարկութամբ։

Ի՞նչէ նշանակում ընդհանուր ընտրողական իրաւունք։

Դա նշանակում է այն, որ քուէարկութեան իրաւունք պիտի ունենայ ամեն ոք՝ տղամարդ թէ կին, ով քան տարեկան է։ Շատ կարևոր է, որ կանանց էլ քուէարկութեան իրաւունք տրվի, որովհետև կինն էլ նոյնչափ աշխատում ու շահագործվում է, ինչպէս և տղամարդը, ուրեմն նա էլ պէտք է մարտնչէ շահագործումից ազատվելու համար։ Աւելին կարելի է ասել. ներկայ հասարակութեան մէջ կանայք շատ աւելի են

ճընշված, քան տղամարդիկ. նրանք այնպիսի իրաւունքներից են զրկված, որ տղամարդիկ վաղուց ունեն արդէն։ Բացի դրանից՝ կանանց աշխատանքի վարձը միշտ աւելի պակաս է գնահատվում, քան տղամարդինը, չընայելով որ նրանք էլ մի և նոյն աշխատանքն են կատարում։ Հէնց այդ է պատճառը, որ գործարանատէրերը միշտ աշխատում են ամեն տեղ, ուր հնարաւոր է, տղամարդկանց աշխատանքը փոխարինել կանանց աշխատանքով, որի հետևանքը այն է լինում, որ բանւորների մայրերը, քոյրերը և կանայք փոխանակ նրանց հետ ձեռք ձեռքի տուած, իրրև շահակից ու բաղտակից ընկերներ, միասին իրանց ընդհանուր շահագործողների և կապիտալի դէմ կռիւ մղելու, միմեանց աշխատանքի մրցակիցներ են հանդիսանում։ Բացի դրանից, քաղաքական իրաւունքներից կանանց զուրկ լինելը և այն տխուր հետևանքն է ունենում որ եթէ, օրինակի համար, մայրը սարկական ոգով է մեծացած, նա այդ ոգին ու զգացումները ներշնչում է և իր որդուն, կամ եթէ կինը չէ հասկանում իր ամուսնու մղած կռուի նշակութիւնը, նա միշտ խանգարում է նրան իր կշտամբանքներով ու արցունքներով։ Հէնց դրա համար էլ անհրաժեշտ է, որ կանայք էլ քաղաքացիներ դառնան, ուստի պէտք է նրանց դուրս հանել իրաւազուրկ դրութիւնից, միջոց տալ նրանց, տղամարդկանց հետ հաւասար իրաւունքներով մասնակցելու պետական և հասարակական գործերում։

Քան տարեկան հասակը այն հասակն է, երբ մարդ արդէն խելահաս է դառնում ու կարող է ծանօթանալ կեանքի չարի և բարու հետ, հասկանալ ժողովրդի կարքինները։ Բացի դրանից, երիտասարդական հասակում մարդ աւելի անշահախնդիր կեպով է նուիրվում հասարակական գործին և չէ մտածում իր անհատական շահերի մասին։ Ահա թէ ինչու պիտի պահանջել, որ ընտրողական իրաւունք ունենալու

համար 20 տարիքից աւելի չը պահանջվի։ Այդ տարիքից աւելին պահանջված դէպքում առհասարակ դեկավարվում են այն մտքով, թէ օրինակի համար 25 տարեկան մարդը արդէն ընտանիքի տէր կըլինի և միշտ դիջող կը լինի գործից զրկվելու կամ մի այլ սպառնալիքի տակ։

Բայց ենթադրենք, թէ արդէն ընդհանուր ընտրողական իրաւունք է յայտարարված թէ տղամարդկանց և թէ կանանց համար, 20 տարեկանից սկսած։ Դա դեռ բաւական չէ, որ իրապես ընտրողական իրաւունքը ընդհանուր լինի։ Երբեմն մի որ և է «ծանօթութիւնով» կամ մի անըմբռնելի բառով միլլիօնաւոր մարդոց մի անգամից զրկում են ընտրողական իրաւունքից։ Ինչենք այդ կարգի սրամիտ խարդախութիւններից գլաւորները։

Ընդհանուր ընտրողական իրաւունքը կարելի է սահմանափակել, կապելով նրան կրթութեան աստիճանի հետ։ Այդ պարագայում կարող են, օրինակի համար, ասել՝ ընդհանուր ընտրողական իրաւունք են տալիս բոլոր գրագէտ տղամարդիկ և կանայք...։ Ահա, բաւական է մի հատ «գրագէտ» բառը կցել, որպէսզի Ռուսաստանի աշխատաւոր բնակիչների կէսից աւելին զրկվի ընտրողական իրաւունքից։ Բայց ով է մեղաւոր, որ ժողովրդի մեծագոյն մասը անգրագէտ է մնացել մինչև XX-դ դարը։ Ժողովրդի տգիտութիւնը ձեռնտու է միայն նրա շահագործողներին, որոնց վրա էլ հէնց ընկնում է ժողովրդին չարամտաբար ուսումից զրկելու յանցանքը։ Եթէ նրանք ուսումը միայն իրանց ու իրանց զաւակների բաժին են դարձրել, թող ուերմն չը համարձակվեն ժողովրդին ասելու, թէ նրան չէ կարելի թոյլ տալ պետական գործերում մասնակցելու, որովհետև նա անգրագէտ ու տգէտ է։ Բայց որչափ էլ տգէտ լինի բանւորը, այնուամենայնիւ նա շատ լաւ է հասկանում իր շահերը։ Կառավարութիւնն էլ ճիշտ հէնց դրանից է վախենում. նա գիտէ, որ եթէ

բանուորներին քաղաքական իրաւունքներ տրվեն, նրանք այլևս պետութեան ճակատագիրը չեն յանձի բիւրոկրատիայի ու կապիտալիստների ձեռքը։ Հէնց այդ վախն է միակ պատճառը, որ գործարանատէրերը, հողատէրերն ու վաճառականներն էլ միանալով կառավարութեան հետ, միշտ աշխատում են միլիոնաւոր աշխատաւորներին զրկել քուէարկութեան իրաւունքից, պատճառաբերելով նրանց անգրագիտութիւնը։ Նրանց կարելի էր ասել, որ եթէ դուք ցաւում էք անկեղծարար ժողովրդի անգրագիտութեան ու տգիտութեան համար, այն ժամանակ շտապեցէք շուտով ուսումնարաններ բանալ ձեր գործարաններին կից թէ չափահաս և թէ մանկահասակ բանուորների համար և, որ գլխաւորն է, կրճատեցէք աշխատանքի ժամերը, որպէսզի բանուորները ժամանակ և միջոց ունենան սովորելու, կրթվելու։ Փորձեցէք այսպիսի խօսքերով գործարանատէրերին մօտենալ, նրանցից 100-ից 99-ը կը դայրանան բանուորների «յանդգնութեան» վրա, իսկ միւս մէկն էլ լալկան եղանակով կը սկսի «բացատրել» ձեզ, թէ որ աստիճան «անհնարին է» այդպէս բարձր կարգեր մտցնելը գործարանում։

Քուէարկութեան իրաւունքի ընդհանուր լինելը կարող են սահմանափակել և հարստութեան աստիճանով։ Օրինակ՝ ընտրողական իրաւունք է տրվում բոլոր նրանց, ով տարեկան այսքան բուբլուց ոչ պակաս հարկ է վճարում պետութեանը։ Այսպիսով, ի հարկէ, դարձեալ բանուորներն ու ազատ գիւղացիներն են զրկվում քուէարկութեան իրաւունքից, չը նայելով որ հէնց նրանք են ամենից շատ հարկ վճարողները. բանը նրանումն է, որ ժողովրդի վրա իրանց ամբողջ ծանրութեամբ ընկնում են անուղղակի հարկերը, այն է՝ ծխախոտի, լուցկիի, նաւթի, օղու, երկաթի, թէյի, շաքարի, ջրի և այլն, և այլն հարկերը, որոնք վերցվում են ոչ թէ ուղղակի կերպով, բայց աւելացված են

ապրանքի գնի վրա, սակայն այդպիսով նրանք չեն դադարում հարկ լինելուց։ Իսկ քուէարկութեան իրաւունք ունենալու համար, ի նկատի են առնվում միայն ուղղակի հարկերը, այսինքն նրանք, որոնք վճարվում են ուղղակի կերպով և ոչ թէ ապրանքի գնի միջոցով։ Այդպիսի հարկերն են՝ արդիւնաբերական հարկ, բնակարանի հարկ, եկամուտի հարկ, և այլն։ Այդ կարգի հարկեր բանուորը ընդհանրապէս չէ վճարում, որովհետև նա արդիւնաբերութիւն չունի և յաճախ էլ իր սեփական բնակարանում չէ ապրում, այլ բանուորական կազարմաններում և կամ մի ուրիշի բնակարանի մի անկիւնում, ուստի նա կամ բոլորովին և կամ թէ չէ՝ շատ չնչին հարկ է վճարում։ Գիւղացիները վճարում են ուղղակի հարկ—հողային տուրքը, և հէնց դրա համար էլ մեզանում յաճախ ասում են, թէ բոլոր գիւղացիք իրաւունք ունեն գիւղական ժողովում մասնակցելու։ Բայց այդ «բոլոր» ասելն էլ ճիշտ չէ, որովհետև միայն տանտէրերը իրաւունք ունեն ժողովում մասնակցելու, կամ այլ խօսքերով՝ իւրաքանչիւր տանից մի մարդ, այն է՝ տան գլխաւորը։ Բայց չէ՞ որ միևնոյն տան մէջ յաճախ տանտիրոջից զատ ապրում են 5—6 և աւելի տղամարդիկ ու կանայք։ Ուրեմն, եթէ ընտրողական իրաւունք տրվի միայն հողային տուրք վճարողներին, այդ պարագայում գիւղական ժողովրդի մի շատ չնչին մասը կօգտվի այդ իրաւունքից, իսկ մեծագոյն մեծ մասը բոլորովին զրկված կը լինի, և զրկվողները, ի հարկէ, աւելի երիտասարդութիւնն է, որովհետև ընտրութիւններին մասնակցողը տան մեծն է լինում միշտ։ Իսկ թէ ինչ է նշանակում այդ, կարող է հասկանալ ամեն մի գիւղացի։ Եթէ գիւղական ժողովներին մասնակցէր երիտասարդութիւնն էլ, այն ժամանակ այդ ժողովները խաղալիք չէին դառնայ զանազան իշխանաւորների, վաշխառուների ու տգրուկների ձեռքին։ Երիտասարդութիւնը այնպիսի մի ընդդի-

մաղրութիւն ցոյց կը տար, որպիսին երբէք չէին յանդգնի անել ծերերը, որոնցից շատերը դեռ յիշում են ճորտութեան ժամանակները և սովորել են ամեն մի աղայի առաջ դողալ։

«Օրէնքի հաւասարն» ընտրողական իրաւունքը սահմանափակելու մի ուրիշ ճանապարհ էլ կայ.—այդ այն է, որ ընտրողական իրաւունքը կապում են այն հանգամանքի հետ, թէ մէկը որչափ ժամանակ է միևնոյն վայրում բնակվել։ Օրինակի համար, օրէնքը յաճախ պահանջում է, որ ընտրողական իրաւունքով օգտվողը պէտք է մի-երկու, երբեմն երեք և աւելի տարի անպատճառ ապրած լինի այն ընտրողական շրջանում, ուր նա քուէ պէտք է տայ։ Դա ուղղակի մի անարդար ծաղր է ժողովրդի դէմ, որովհետև մի՞թէ շարունակ միևնոյն վայրում չապրող ու իր գործերով այս ու այն կողմ թափառող մարդը պակաս է շահահագրգռված պետական գործերով ու կարգերով։ Ընտրողական իրաւունքը այդ եղանակով սահմանափակելու չարամիտ օրէնքը հնարված է գլխաւորապէս և գիւղացիներին ընտրողական իրաւունքից զրկելու նպատակով, որովհետև բանւորներն ու գիւղացիներն են, որ իրանց օրապահիկը հայթայթելու համար, ստիպված են շարունակ տեղից տեղ թափառել, մէկ օր այստեղ, միւս օր մի այլ տեղ գործ և աշխատանք գտնելու համար։ Եւ այդպէս շարունակ չապրողների թիւը Ռուսաստանում միլիոնների է հասնում։ Հէնց դրանց է, որ ուզում են ընտրողական իրաւունքից զրկել։

Սակայն ենթադրենք, որ ընտրողական իրաւունքը սահմանափակող վերոգրեալ օրէնքներից և ոչ մէկը գոյութիւն չունի, այլ ամբողջ ժողովրդին մեր ուզած ձևով ընտրողական իրաւունք է տրված։ Բայց արդեօք այդ դէպքում էլ կարելի՞ է հանգիստ լինել ու ասել, թէ ոչ ոք զրկված չի լինի քուէի իրաւունքից։ Դժբաղդաբար պէտք է խոստովանել, թէ ոչ, որովհե-

ուն մարդկային խորամանկութիւնը շատ հնարագէտ է և որտեղ անկարելի է ուղածը ուղղակի ճանապարհով անել, ծուռ ու մուռ ճանապարհների են դիմում։

Ի հարկէ, ոչ մի հնարաւորութիւն չը կայ նախօրօք նախատեսել ամեն կարգի խարդախութիւնները. հարկաւոր է ամեն մի ընտրութեան ժամանակ շատ զգաստ լինել։ Բայց մենք կարող ենք մատնանիշ անել մի քանի բաւականին տարածված եղանակների վրա, որոնց միջոցով կարողանում են հէնց ընտրութիւնների ժամանակ զանց առնել ընտրողական իրաւունքի «ընդհանուր» լինելը։ Վերցնենք, օրինակի համար, ընտրութիւնների ժամանակը նշանակելը։ Բաւական է, որ ընտրութիւնները լի օր նշանակվեն և այն էլ աշխատութեան ժամերին, որպէս զի բանուորները համարեա թէ բոլորովին զրկվեն ընտրողական իրաւունքից, մի իրաւունք, որ նրանց «օրէնքով» տրված է թղթի վրա։ Զէ՞ որ շատ քչերը համարձակութիւն կունենան աշխատանքը թողնել և քուէարկութեան խաթրու տուգանք վճարել գործարանատիրոջը։ Նոյնը կը լինի, եթէ ընտրութիւնները նշանակվեն երեկոյեան, հանգստութեան ժամերին։ 12—14 ժամ ծանր աշխատանքից յետոյ, ամեն մարդ չէ կարող այն աստիճան ըմբռնել ընտրութիւնների կարևոր նշանակութիւնը, որ փոխանակ հանգստանալու, գնայ ընտրողական բիւրօն ու այնտեղ հերթի սպասի։ Շատ շատերը կը մտածեն.— «մե՞ծ բան է, որ ես չը գամ, առանց ինձ էլ ուրիշներ շատ կան»։ Բայց բանն էլ հէնց նրանումն է։ որ այդպէս մտածողները շատ շատերն են լինում և այդպիսով հազարաւոր բանուորներ զրկվում են ընտրողական իրաւունքից։ Հէնց դրա համար էլ պէտք է որ ընտրութիւնները անպատճառ տօն կամ կիրակի օր նշանակվեն, երբ բանուորների մեծամասնութիւնը չէ աշխատում։ Իսկ այն բանուորները, որոնք տօն օրերումն էլ են աշխատում, (կօնդուկտօրները, երկաթուղու և տր-

բաժվայի վրա աշխատողները, պոստային ծառայողները, գործակատարները, տան ծառաները և այլն), պէտք է պարտաւորաբար արձակված լինեն գործատէրերի կողմից ընտրութիւնների օրը, առանց իրանց օրավարձից զրկվելու, կամ գոնէ այդ օրը կէսօրից հետքական աշխատանք պէտք է սահմանել։ Այդ եղանակով միայն բոլորն էլ հնարաւորութիւն կունենան ընտրութիւններին մասնակցելու։ Որպէսզի ընտրողական իրաւունքը ընդհանուր լինի, նոյնպէս մեծ կարևորութիւն ունի և ընտրութիւնները կատարելու տեղը։ Ենթադրենք, օրինակի համար, որ ընտրողական շրջանը 20—30 վերստի վրա է տարածվում, իսկ ընտրութիւնները կատարելու տեղը նշանակված է այդ շրջանի մի ծայրում։ Կարող են արդեօք միւս ծայրում ապրող բոլոր ընտրողները գալ ընտրութիւններին մասնակցելու։ Հարուստների համար այդ ոչ մի նշանակութիւն չունի, մարդն էլ, կինն էլ ու չափահաս որդիներն էլ կարող են գնալ, ասենք ու երեխաներին ծառաների խնամքին թողնելով, իսկ ծառաները, նրանք, ի հարկէ, չեն կարող գնալ և ուրեմն կը զրկվեն իրանց իրաւունքից։ Չի ունեցող գիւղացին էլ կարող է գնալ, բայց նա էլ կամ կնոջը, կամ մօրը և և կամ ընտանիքի չափահասներից մէկին պէտք է տանը թողնէ, երեխաներին ու անասուններին խնամելու համար։ Ուրեմն դարձեալ ընտանիքից մէկն ու մէկը պէտք է զրկվէ քուէի իրաւունքից։ Աւելորդ է ասելը, որ 20—30 վերստ հեռաւորութեան վրա ապրող բանւորին բոլորովին անհնարին կը լինի ընտրութիւններին գնալ. նա ձի չունի, իսկ փող ծախսել ամբողջ ընտանիքով այդչափ հեռու գնալու համար, նրա ոյժերից վեր կը լինի։ Բանից դուրս է գալիս ուրեմն, որ եթէ ընտրութիւնները անյարմար տեղ լինեն նշանակված, «ընդհանուր» ընտրողական իրաւունքից ոչինչ չի մնայ։ Ա՛յ, թէ ի՞նչպէս հեշտ է, մի փոքրիկ խորամանկութիւնով ժողովրդի

մի անագին բազմութիւն զրկել ընտրողական իրաւունքից։

Որպէս զի այդպիսի բաներ չը պատահեն, պէտք է պահանջել, որ եթէ ընտրողական շրջանը մեծ է, նրա զանազան մասերում մի քանի ընտրողական բիւրօներ կազմվեն, որպէս զի ամեն մարդու համար մօտ լինի։ Եւ որպէս զի մի և նոյն մարդը չը կարողանայ զանազան բիւրօներում քուէ տալ, հարկաւոր է միայն, որ քուէ տալու միջոցին, քուէարկութեան մասնակցելու իրաւունքը ապացուցանող նրա անուանական տոմսակի վրա նշանակել, թէ նա արդէն քուէարկել է։

Մեծ նշանակութիւն ունի և շէնքը, որի մէջ ընտրութիւնները պիտի կատարվեն։ Թւում է թէ ինչ կապ կարող է ունենալ շէնքը ընտրողական իրաւունքի ընդհանուր լինելու հետ։ Սակայն կապ կայ, և այն էլ մեծ կապ։ Երևակայեցէք, որ ընտրութիւնները կատարելու համար յատկացված է մի փոքրիկ սենեակ, որի մէջ հազիւ 20—25 մարդ կարող են տեղաւորվել, իսկ ընտրողական բիւրօն էլ բաղմված է մի երկու զոյգ գրագիրներից։ Այդպիսով ընտրութիւնները շատ դանդաղ առաջ կը գնան, իսկ ընտրողների թիւը գուցէ 10—15 հազար է։ Ի՞նչ էք կարծում, միթէ շատերը համբերութիւն կունենան սպասելու 10, 15, 20 ժամ, մինչև ուշ գիշեր ու այն էլ փողոցում, գուցէ և խիստ ցուրտ ժամանակ։ Այս դէպքում էլ դարձեալ հարուստները շատ բան չեն կորցնի. նրանք, տաք մուշտակներում փաթաթված, կարող են մի քանի անգամ կառքով գալ. եթէ տեսնեն որ բիւրօն զրաղված է, կը վերադառնան կլուբ կամ մի այլ տեղ և սպասեն, գիշերվայ ուշ ժամին, երբ բազմութիւնը արդէն ցրված կը լինի, նորից կը գան բիւրօն իրանց քուէները տալու։ Իսկ խեղճ ժողովուրդը այդպէս սպասել չէ կարող. աշխատանքից յետոյ նա յոգնած է լինում և միւս օրն էլ վաղ առաւօտեան գործի պիտի գնայ։

Բացի դրանից՝ հին հագուստներով նա չէ կարող երկար փողոցում մնալ, ցուրտ է. նոյնպէս չէ կարող և երկար ժամերով քաղցած մնալ. եթէ տուն գնայ, հեռու է, այլ ևս կը ծուլանայ վերադառնալու, իսկ եթէ մօտիկ ճաշարանը գնայ—թանգ է, սիրտ չի անիլ։ Ուրեմն ճարահատեալ նա ձեռքը կը թափահարի օդի մէջ ու կը հեռանայ ասելով. «Ջհանդամը ընտրութիւնները, ինչի՞ս պէտք...» Ինչպէս տեսնում էք, ըստ երևոյթին մի մեծ բան չէ շէնքի խնդիրը, բայց և այնպէս նրա պատճառով շատ բանւորներ ու խեղճ մարդիկ կարող են զրկվել ընտրողական իրաւունքից։ Ուրեմն անհրաժեշտ է պահանջել, որ ընտրողական բիւրօն բաւականին մեծ լինի և նրա մէջ շատ պաշտօնեաներ աշխատեն, որպէս զի գործը արագութեամբ ընթանայ և մարդիկ սոխպուած չը լինեն երկար հերթի սպասելու։

V

ՀԱՒԱՍԱՐ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Սոց.-դեմոկրատ կուսակցութիւնը պահանջում է, որ ընտրողական իրաւունքը հաւասար լինի։ Այդ նշանակում է, որ ոչ ոք. ոչ հարուստը, ոչ աղքատը, ոչ ուսեալը, ոչ անգրագէտը, ոչ այրը, ոչ կինը, ոչ ծերը, ոչ երիտասարդը,—ոչ ոք մի ձայնից աւելի չը պիտի ունենայ։ Իւրաքանչիւր ընտրողի ձայնը պիտի լինի հաւասար, ունենայ նոյն նշանակութիւնը, ինչ և մի ուրիշ ընտրողի ձայնը։ Մի խօսքով պէտք է լինի մի մարդ—մի ձայն։ Մի բանի երկիրներում բոլոր ընակիչներին ձայների իրաւունք չէ տրված, մինչդեռ հարուստներին և ուսեալներին տալիս են աւելորդ ձայներ, նրանց դրամական հարստութեան, հողի քանակութեան և ուսման աստիճանի համաձայն։ Այդ բանը, ի հարկէ, անարդարութիւն է և չը պէտք է

թոյլ տալ, որ այդպէս լինի։ Հարստութիւնն ու ուսումը ինքն ըստ ինքեան մեծ ոյժ են մարդու ձեռքին. նրանք միջոցներ են տալիս մի բուռն մարդկանց շահագործել միլիոնաւոր ժողովուրդներ։ Միթէ կարելի՞ է համաձայնել, որ շահագործութիւնից դուրս էլ հարստութիւնն ու ուսումը առանձին արտօնութիւններ տային մարդկանց, սահմանադրական խնդիրներին ու պետական գործերին մասնակցութիւն ունենալու համար։

Ընդհանուր ընտրողական իրաւունքի մասին խօսելիս, մենք արդէն ցոյց տուեցինք, թէ ինչպէս շահագործողները, չը համարձակելով ժողովրդին բացարձակ կերպով զրկել ընտրողական իրաւունքից, հազար ու մի տեսակ ծուռը ճանապարհներ են գտնում նոյն բանը անուղղակի կերպով անելու։ Նոյնը կատարվում է և «հաւասար» ընտրողական իրաւունքի վերաբերեալ։ Կարելի է, որ օրէնքի մէջ ոչ մի խօսքով յիշված չէ, թէ ժողովրդին անհաւասար իրաւունք է տրվում. կարելի է ոչ մի խօսքով ասված չէ, թէ հարուստներին առանձին արտօնութիւններ են տրվում, մինչդեռ արտօնութիւնները չորս կողմից թափվում են նրանց գլխին։ Փնտրենք այդ կարգի մի քանի դէպքեր, միայն թէ նորից ասում ենք, որ ամեն բան չէ կարելի առաջուց նախատեսել։

Օրէնքում, օրինակի համար, յաճախ ասում են, որ ընտրութիւնները պէտք է կատարվեն ընդհանուր բուէարկութեամբ և ամեն մի ընտրող պէտք է ունենայ մի ձայն, սակայն իւրաքանչիւր դասակարգ պետք է առանձին ընտրի իր ներկայացուցիչներն։ Այդ եղանակով հաւասար ընտրողական իրաւունքից հետքն էլ չէ մնում։ Վերցնենք, օրինակի համար, Ռուսաստանի զեմստվոները։ Զեմստվոյի համար գիւղացի դասակարգը առանձին է ընտրում իր ներկայացուցիչներին, իսկ մանաւոր հողատէրերը, այսինքն՝ ազնուականները առանձին։ Եւ ինչ էք կարծում. զեմստվոների 9523

նեկայացուցիչներից 5433-ը, այսինքն՝ կէսից աւելին ազնուականների ներկայացուցիչներ են լինում, իսկ մնացած 4090-ը միայն գիւղացիների նեկայացուցիչներ։ Այդ հաշուով պէտք է ենթադրել, որ Ռուսաստանում ազնուականների թիւը շատ աւելի մեծ է, քան գիւղացիներինը, մինչդեռ այդպիսի բան բոլորովին չը կայ և չէ էլ կարող լինել։ Ընդհակառակը Ռուսաստանում գիւղացիների թիւը ազնուականներից մի քանի հարիւր անգամ աւելի մեծ է, բայց նրանք, ինչպէս տեսնում էք, շատ աւելի քիչ ներկայացուցիչներ են ընտրում։ Միշտ էլ հէնց այդպէս է լինում, երբ դասակարգերը առանձին-առանձին են ընտրութիւնները կատարում և երբ նախօրօք որոշված է լինում, թէ իւրաքանչիւր դասակարգից քանի ներկայացուցիչներ պէտք է ընտրվեն։ Այդպիսի օրէնքն էլ հէնց նրա համար են յօրինում, որպէս զի «բարձր» դասակարգերին, մի բուռը մարդկանց, աւելի շատ ընտրողական իրաւունքներ տրվի, քան բազմամիլիոն աշխատաւոր ժողովրդին։ Հետևապէս, դասակարգերի առանձին ընտրութիւններ կատարելու դէպքում խօսք էլ չէ կարող լինել քուէների հաւասար իրաւունքի մասին։ Ուրեմն, խարեբայ և դաւաճան է այն մարդը, ով յայտարարում է, թէ ամբողջ ժողովրդին քաղաքական ազատութիւն է հարկաւոր, բայց միևնոյն ժամանակ աշխատում է, որ դասակարգերը առանձին-առանձին ընտրեն իրանց ներկայացուցիչներին։

Մի ուրիշ դայրացուցիչ միջոց էլ կայ ընտրողական իրաւունքի հաւասարութիւնը խախտելու համար։ Դա ժողովրդական ներկայացուցիչների երկու պալատ ունենալու սիստէմն է։ Այդ կարգի պալատները յաճախ անուանում են՝ ներքին և վերին պալատներ։ Ներքին պալատի համար եթէ նոյն իսկ ներկայացուցիչներ ընտրում է ամբողջ ժողովուրդը, բայց վերին պալատի համար առհասարակ ընտրում են միայն ունևոր դա-

սակարգերը—ազնվականները, վաճառականները, հոգևորականությունը։ Ամեն մի օրէնք պէտք է ընդունված լինի անպատճառ երկու պալատների կողմից էլ։ Այդ դրությամբ ընտրողական իրավունքի հավասարությունը բոլորովին ոչնչանում է, որովհետև ունևոր դասակարգերին պատկանողներից իւրաքանչիւրը երկու ձայն է ունենում—մի ձայն ներքին պալատում քուէարկելու համար, իսկ մի ձայն էլ վերին պալատում. այն ինչ հասարակ մահկանացուն ընդամենը մի ձայն է ունենում։ Այդ էլ դեռ բավական չէ. ունևոր դասակարգերի ձայները երկու պալատներում շատ ավելի նշանակություն ու կշիռ են ունենում, քան չունևոր քաղաքացիների ձայները։ Եւ յիրաւի, եթէ ամեն մի որոշում օրէնք է դառնում երկու պալատներում քուէարկելուց յետոյ, մի բուռն ունևոր դասակարգերից ընտրված վերին պալատը միշտ կարող է արգելել հրատարակելու այն բոլոր օրէնքները, որ իրան հաճելի չեն, թէև այդ օրէնքը քուէարկել և ընդունել են ամբողջ ժողովրդից ընտրված ներքին պալատում։ Այդպիսով հարուստների մի փոքրիկ խումբ հնարաւորություն է ստանում խեղդելու ամբողջ ժողովրդի կամքը։ Ահա թէ ինչ է նշանակում երկու պալատ ունենալ։ Հետևապես, ով որ երկպալատեան ժողովրդական ներկայացուցչությանն կողմնակից է, նա ցանկանում է ժողովրդին իրաւազուրկ թողնել և նրան ունևոր դասակարգերի ներկայացուցիչների իշխանությանը յանձնել։ Երբէք չը պէտք է մոռանալ. երկու պալատ ունեցած ժամանակ բոլոր քաղաքացիների հավասարության մասին խօսք չէ կարող լինել։ Մի եւ միմիայն ժողովրդային ներկայացուցչությունն—ահա թէ ինչ է հարկաւոր ժողովրդին։ Ոչ մի մարդ և ոչ մի հիմնարկություն չը պէտք է իրաւունք ունենայ մի բոպէ անգամ կանգնեցնել գործադրության մէջ մտցնելու այն բոլոր

օրէնքները, որոնք ընդունված կը լինեն ժողովրդից ընտրված պարտուց։

Փնտրենք հիմա այն մի բանի, առաջին հայեացքից՝ աննկատելի ֆոկուսները, որոնց միջոցով աշխատում են ընտրողական իրաւունքի հաւասարութիւնը զրոյի հաւասարեցնել։ Ահաւասիկ, օրինակի համար, այն օրէնքը, որով ընտրողական իրաւունք է տրվում, այսպէս կոչված, իրաւաբանական անձերին, այսինքն այն բոլոր ընկերութիւններին, որոնք կառավարութեան կողմից հաստատված կանոնագրութիւններ ունեն և մի որ և է կարողութեան տէր են։ Առաջին հայեացքից այդտեղ ոչ մի առաձին վատ բան չը կայ։ Ի՞նչ վնաս ունի, օրինակի հիմար, եթէ մի որ և է Մարզոլի մանուֆակտուրան կամ Կասպեան նաւթարդիւնաբերական գործարանը և կամ մի որ և է այլ ակցիոներական ընկերութիւն ընտրութիւնների ժամանակ բուէի իրաւունք ունենան։ Բայց իսկապէս դա այն է նշանակում, որ հարուստ մարդիկ, որոնք շատ զանազան արդիւնաբերական ձեռնարկութիւնների մէջ կապիտալներ են դրել, ոչ թէ մի ձայն կունենան, ինչպէս բանուորները ու գիւղացիները, այլ երկու. երեք և նոյն իսկ աւելի։ Մի որ և է Փիլիպոսեան մի անգամ բուէ կը տայ իբրև պարզ քաղաքացի, միւս անգամ—իբրև ներկայացուցիչ մի որ և է մանուֆակտուրայի, երրորդ անգամ—իբրև ներկայացուցիչ հանքային գործերի, չորրորդ անգամ—երկաթագործական գաւօդի և այլն և այլն։ Այլ ևս ի՞նչ հաւասարութիւն մնաց։

Հաւասարութիւնը խախտելու մի միջոց էլ կայ. ամեն մի ընտրողի իրաւունք է տրվում քուէարկել այն բոլոր ընտրողական շրջաններում, որտեղ նա անշարժ կալուածներ ունի։ Եւ այդ օրէնքը այն հետևանքն է ունենում, որ կալուածատէրերը, որոնք մի քանի տեղերում կալուածներ ունեն, և վաճառականները, որոնք մի քանի զանազան տեղերում առևտրա-

կան աներ կամ գործարաններ ունեն, մի քանի քուէի իրաւունք են առանում և մի քանի շրջաններում են բուէարկում։ Ահա թէ ինչու պէտք է պահանջել, որ իւրաքանչիւր մարդ միայն մի անգամ եւ մի բնակարանի շրջանում միայն քուէարկի։ Քուէարկողը կարող է ընտրութիւններին մասնակցել այն շրջանում, ուր որ ինքը կը ցանկանայ. բայց մի անգամ քուէարկելուց յետոյ այլ ևս իրաւունք չունի ուրիշ տեղ էլ քուէարկելու։ Այդ մասին լաւ պիտի հսկել, որպէս զի զեղծումներ չը պատահեն։

Ինչպէս քանիցս անգամ ասել ենք, անհնարին է նախատեսել ու թուել այն բոլոր կեղծիքները, որ կարելի է հնարել ընտրողական իրաւունքի հաւասարութիւնը ոչնչացնելու համար։ Բայց անհրաժեշտ է մի խորամանկութեան վրա էլ կանգ առնել մանրամասնօրէն, որովհետև նա յաճախ է գործ ածվում և նրա շնորհիւ, օրինակի համար, գերմանական բանւորները շատ են տուժում։

Օրէնքով Գերմանիայում գոյութիւն ունի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի ընտրողական իրաւունք։ Կարծես թէ դրանից էլ լաւ բան չէր կարող ժողովուրդը ցանկանալ։ Սակայն նայենք գերմանական պարլամենտում—Ռեյխստագում եղած պատգամաւորների թիւին։ Օրինակի համար, վերջին ընտրութիւնների ժամանակ բանւորական դասակարգի կուսակցութիւնից —սոցիալ-դեմոկրատներից ընտրված են 81 պատգամաւորներ, իսկ կենտրոնի կուսակցութիւնից՝ կաթոլիկական քահանաներից—100 պատգամաւորներ։ Ով որ գիտէ, թէ Գերմանիայում գոյութիւն ունի ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունք, իսկոյն պէտք է կարծէ, թէ ուրեմն սոցիալ-դեմոկրատներին ձայն տուողները աւելի քիչ են, քան թէ տէրտէրներին։ Եւ ի հարկէ մարդ պէտք է զարմանայ. ապա ինչպէս են ասում, թէ Գերմանիայում բանւոր դասա-

կարգը համարեա ամբողջապէս սոց.-ռամկավարներից է կազմված, մինչդեռ մի որ և է տէրտէրական կուսակցութիւն աւելի մեծ յաջողութիւն ունի ժողովրդի մէջ, քան սոց.-ռամկավարները։ Նայենք սակայն, ոչ թէ ընտրված պատգամաւորների թիւին, այլ այդ պատգամաւորների համար տրուած քուէների թիւին։ Այստեղ պատկերը բոլորովին փոխվում է. դուրս է գալիս որ սոց.-ռամկավ.-ին տուած ձայների թիւը 3,025,000 է, իսկ կենտրոնին տուած ձայների թիւը ընդամենը 1,856,000։ Հետևապէս սոց.-ռամկավարներին շատ աւելի մեծ թւով ձայներ են տուել, քան թէ տէրտէրներին, մինչդեռ Բէյխստագում սոց.-ռամկավարներկայացուցիչները աւելի քիչուոր են։ Միջին թւով ամեն մի սոց.-ռամկ. պատգամաւոր ընտրված է 37,345 ձայնով, իսկ ամեն մի կենտրոնի պատգամաւոր —ընդամենը 18, 560 ձայնով, կամ ուրիշ խօսքով ասած՝ բանուորներին հարկաւոր էր հաւաքել 37, 345 ձայն, որպէսզի կարողանան իրանց մի պատգամաւորը ուղարկել պարլամենտ, իսկ կաթոլիկ տէրտէրների կողմնակիցներին հարկաւոր էր հաւաքել 2 (երկու) անգամ աւելի քիչ 18,560 ձայն։ Երկու գիտակից բանուորների ձայները, կը նշանակէ, ընտրութիւնների ժամանակ նոյն նշանակութիւնն ունէին, ինչ որ մի թոյլ գիտակցութեան տէր մարդու ձայնը, որ հաւատարիմ է մնացել կաթոլիկական եկեղեցուն։

Եթէ ընտրողական իրաւունքը իրապէս հաւասար լինէր, այն ժամանակ բանուորները կը կարողանային պարլամենտ ուղարկել ոչ թէ 81, այլ 162 սոց.-ռամկավար պատգամաւորներ։ Ուրեմն, ընտրողական իրաւունքը իրապէս, և ոչ թէ թղթի վրա, անհաւասար է, անհաւասար ի վնաս գիտակից բանուորների, որոնց ձայնը բոլոր միւս մնացած բնակիչների ձայներից 2 անգամ պակաս ոյժ է ստանում։ Արդ, ինչպէս ուրեմն

այսպէս եղաւ, քանի որ օրէնքը ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունք է յայտարարում։

Այդ եղաւ շատ հասարակ կերպով. շնորհիւ այն կառավարչական ֆոկուսի, որ գերմանական մինիստր Բիսմարկը անուանում էր «ընտրողական աշխարհագրութիւն»։ Ահա թէ ինչումն է կայանում այդ խարդախ «աշխարհագրութիւնը». ամբողջ երկիրը բաժանւում է ընտրողական շրջանների։ Սակայն, օրինակի համար, այն ընտրողական շրջանները, որտեղ կան գործարաններ և գաւօդներ բազմամարդ բանւոր բնակչութեամբ, շատ աւելի մեծ մասերի են բաժանւում իրանց մէջ ապրող ընտրողների քանակով, այն ինչ այն շրջանները, որտեղ ապրում է խաւար, ճնշված և պապենական նախապաշարումներով տոգորված գիւղական ժողովուրդը, շատ փոքր մասերի են բաժանւում։ Եւ այդպէս անհաւասար բաժանված ընտրողական շրջաններից իւրաքանչիւր պարտաւոր է մի հաս պատգամաւոր ընտրել։ Այդպիսով ահա, քաղաքային, բանւորական շրջանները միշտ զրկված են մնում գիւղական շրջանների համեմատութեամբ։ Պէտք է նկատի առնել և այն, որ քաղաքային արդիւնագործութեան աճման շնորհիւ, քաղաքների բնակչութիւնը արագութեամբ խտանում է, իսկ գիւղերինը նօսրանում։ Այս էլ ասելու է որ գիւղերից քաղաք են տեղափոխվում ամենաառաքաւոր տարրերը, իսկ մնում են աւելի ապահովված գիւղացիք, որոնք դուրսը վատատեղ փնտռելու կարիք չունեն։ Բայց ով չը գիտէ, որ ունեւոր գիւղացիք միշտ աւելի պահպանողականներ են։ Եւ ահա այսպիսով, ժամանակի ընթացքում քաղաքային ընտրողական շրջաններում բնակիչների թիւը շարունակ աւելանում է, այն ինչ գիւղականը նուազում է, մինչդեռ այդ երկու ընտրողական շրջաններն էլ շարունակում են առաջվայ նման մի մի պատգամաւորներ ընտրել։ Քաղաքներ գնացող աղքատ ժողովրդի ընտրողական իրաւունքը հետզհետէ

շարունակ նուազում է, իսկ իրանց հողերի վրա ամուր նստած հարուստ գիւղացիների ընտրողական իրաւունքը աւելանում է։ Ուրեմն՝ իրապէս ընտրողական իրաւունքի հաւասարութիւն գոյութիւն չունի։

Բայց դրանով չէ վերջանում «ընտրողական աշխարհագրութեան» խարդախութիւնը։ Բիսմարկը մի ուրիշ միջոց էլ գտաւ բանւորների ընտրողական իրաւունքը ծաղրելու համար։ Ուր որ հնարաւոր էր, նա աշխատեց փոքրիկ արդիւնագործական վայրերը խծկել այնպիսի ընտրողական շրջանների մէջ, որոնց բնակիչները համարեա թէ ամբողջապէս գիւղացիներ են։ Նա աշխատում էր ամբողջ երկիրը այնպիսի ընտրողական շրջանների բաժանել, որ նրանց մէջ, հնարաւոր եղածի չափ, բանւորական, գործարանական ժողովուրդը փոքրամասնութիւն կազմէ։ Երբեմն, օրինակի համար, մի որ և է քաղաքի մի ամբողջ գործարանական թաղ մտնում էր ոչ թէ քաղաքային ընտրողական շրջանի մէջ, այլ մերձակայ գիւղական շրջանի մէջ։ Յաճախ այսպիսի պատկեր էր ստացվում. մի ընտրողական շրջանում, օրինակի համար, 30,000 ընտրողներ կան, որոնցից գործարանական բանւորների թիւը ընդամենը 10,000 է։ Ուրեմն, ինչպէս էլ քուէարկեն բանւորները, եթէ միւս 20,000-ը բանւորների թեկնածուին քուէ չը տան, բանւորների քուէները ի դուր կը կորչեն, որովհետև նրանք միշտ փոքրամասնութիւն կը մնան։ Այդպիսի շատ ընտրողական շրջաններ ստեղծելով, Բիսմարկը բանւորներից շատ շատերին զրկեց քուէի իրաւունքից։ Եթէ ընտրողական շրջանները այլ կերպ չափված ու ձևված լինէին, այն ժամանակ այն բոլոր բանւորները, որ այսօր երկու տարբեր շրջաններում քուէարկելով փոքրամասնութեան մէջ են մնում, բոլորն էլ միասին միևնոյն շրջանում կը կարողանային իրանց թեկնածուին անցկացնել։

V

ՈՒՂՂԱԿԻ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Նախորդ գլուխներում մենք պարզեցինք, թէ ինչ է նշանակում ընդհանուր և հաւասար ընտրողական իրաւունքը. այժմ մենք պէտք է խօսենք ընտրողական իրաւունքի ուղղակի ձևի մասին, որ նոյնպէս սոց.-դեմ. կուսակցութեան լոզունգն է դարձել։

Ընտրողական իրաւունքի ուղղակի ձևը այն է, որ քաղաքացիները պատգամաւորներին ընտրում են ուղղակի այն ներկայացուցչական հիմնարկութեան համար, որը օրէնքներ հրատարակելու լիազօր իրաւունք ունի։ Իսկ երբ քաղաքացիներին իրաւունք է տրվում միայն նախ ընտրողներ կամ լիազօրներ ընտրել և ապա այս լիազօրներն է, որ ընտրում են իսկական պատգամաւորներին, այդ ժամանակ ընտրողական ձևը դառնում է անուղղակի, երկաստիճան։

Ճիշդ այդ ձևով են Ռուսաստանում կատարվում ընտրութիւնները Պետական Դումայի համար։ Կասկած չը կայ, որ անուղղակի ընտրութիւնների ձևը ահագին վնաս է հասցնում գլխաւորապէս աշխատաւոր ժողովրդին։ Հէնց նրա համար էլ հնարել են ընտրողական իրաւունք ունեցող քաղաքացիներին մի շարք մաղերի միջից անցկացնելու եղանակը, որպէս զի թոյլ չը տան ժողովրդի խեղճ դասակարգից ընտրվածներին պարլամենտ մտնել։

Եւ յիրաւի, լիազօրները պէտք է ամբողջ ընտրողական շրջանից մի առանձին տեղ հաւաքվեն, վերջնական ընտրութիւններ կատարելու համար։ Ադքատ մարդուն միշտ դժուար է կանխաւ իր ժամանակը դասաւորել, քեզ լիազօր կընտրեն, իսկ յետոյ՝ համեցէք ընտրողական ժողովի գնալ այնպիսի մի ժամանակ, երբ ճիշտ

աշխատելու օրեր կը լինեն կամ թէ անկարելի կը լինի տունը թողնել հեռանալ։ Այդ պատճառով էլ աշխատաւոր ժողովուրդը, թէ քաղաքային և թէ գիւղական, պէտք է միշտ աշխատէ լիազօրների մէջ չընկնել և, այդպիսով, ընտրողների մեծ մասը ունեւոր մարդկանցից կը լինի կազմված, ընտրութիւններն էլ ուրեմն ամբողջապէս հարուստների ձեռքը կընկնեն։

Այդ դեռ բաւական չէ։ Ամեն շրջանում ընտրողների թիւը շատ մեծ է. սովորաբար լինում է 25—30 հազար, երբեմն էլ աւելի։ Ոչ մի կառավարութիւն և ոչ մի հարուստ չէ կարող հաճոյանալ բոլոր ընտրողներին, կաշառել նրանց և կամ որևէ այլ միջոցներով ստիպել, որ բոլորն էլ քուէ տան կառավարութեան կամ հարուստների թեկնածուին։ Բայց խնդիրը բոլորը վին փոխվում է, երբ ընտրութիւնները կախված են մի որևէ 200—400 լիազօր-ընտրողներից։ Այդ դէպքում կարելի է նրանցից իւրաքանչիւրի վրա ազդել. ոէրոէրին լաւ ծուխ կը խոստանան, կալուածատիրոջը՝ ձեռնտու պայմաններով փոխառութիւն, վաճառականին՝ կառավարչական կապալ, հարուստ գիւղացուն՝ իր ագքատ դրացիներից պարտքերը կեղեքելու համար ատիկանական օգնութիւն, իսկ անգիտակից բանւորին էլ, եթէ մի այդպիսին ապրել է լիազօրների մէջ, մի տաքուկ պաշտօն։ Այդպիսով, մէկ էլ տեսար, լիազօրների կէսից աւելին մեղրոտվել է և ուրեմն, փոխանակ իրանց ազատ խղճով ընտրութիւն կատարելու, ընտրում են մատնանիշ արված «յարմար» մարդուն։ Ի՞նչ կարող ես անել. փոքր ու մտերիմ ընկերութեան մէջ մարդիկ միշտ իրարու խաթր պահում են։

Այդ պատճառով էլ, ամեն տեղ, ուր գոյութիւն ունեն երկատիճան անուղղակի ընտրութիւններ, բանւորներին հատարեա թէ անկարելի է լինում իրանց թեկնածուներին անցկացնել պատգամաւորական ժողով։ Վերցնենք հէնց նոյն Գերմանիան։ Մենք արդէն

տեսանք, որ այնտեղ սոցիալ դեմոկրատներին տուել են աւելի քան 3 միլիոն ձայն և որ, չը նայելով ընտրողական իրաւունքի անհաւասարութեանը, նրանք պարլամենտ (ռեյխստագ) ուղարկում են 81 պատգամաւոր։ Բայց Գերմանիան բաժանւում է առանձին պետութիւն—նահանգների։ Այդ նահանգների գործերը վարելու համար էլ գոյութիւն ունեն ընտրողական առանձին հիմնարկութիւններ, որ կոչվում են Լանդտագ։ Պրուսիայում Լանդտագի ընտրութիւնները կատարվում են երկաստիճան եղանակով, և ահա նախանցեալ տարի գերմանական բանւորները չը կարողացան Լանդտագի համար և ոչ մի մարդ իրանց թեկնածուներից ընտրել։ Նրանք շատ լիազօրներ ընտրեցին, բայց ընտրողական սիստեմը այնպէս խորամանկ ձևով է կազմած, որ նրանց լիազօրները ամեն տեղ փոքրաձայնութեան մէջ էին մնում։

Ահա թէ ինչպիսի մեծ նշանակութիւն ունի բանւորների համար ուղղակի ձայնատուութեան իրաւունքը։ Չը պէտք է բոլորովին ենթարկվել այն բոլոր ասէ-կոսէներին թէ իբր Ռուսաստանի ընդարձակ և բազմամարդ լինելու պատճառով, ուղղակի ընտրողական իրաւունքը «անյարմար» է, թէ իբր, պատգամաւորների շատութեան պատճառով, դժուար է ընտրութիւնները կատարել, թէ իբր երկաստիճան ընտրութիւնները օգտակար են այն տեսակէտով, որ նրանք կարող են կատարվել «հանգիստ» կերպով, «մտածված», առանց կրքերի ազդեցութեան և այլն, և այլն։ Այդ բոլոր առարկութիւնները ոչինչ բաներ են և այն էլ կեղծաւոր առարկութիւններ։ Երկաստիճան ընտրութիւնների կողմնակիցները Եւրոպայի օրինակից շատ լաւ գիտեն, որ անուղղակի ընտրութիւնները բոլորովին ժողովրդային ընտրութիւններ չեն, որ երկաստիճան ընտրողական եղանակը զրկում է աշխատաւորներին ընտրողական իրաւունքից։ Հէնց դրա համար էլ

նրանք երկաստիճան ընտրության ձևն են քարոզում, սակայն, որպէսզի կարողանան ժողովրդին լաւ մոլորեցնել, նրանք վերոյիշեալ «անյարմարություններին» են մէջ բերում։

Ընդհանուր և նոյն իսկ հաւասար ընտրողական իրաւունքի մասին խօսողին բանաւորները պէտք է դեռ մի լաւ շշուփեն, թէ արդեօք ընտրությունների ուղղակի ձևի մասին նա ինչ է մտածում։ Եւ եթէ այդպիսի մէկը կը սկսի խէթ աչքով նայել ու խուսափողական պատասխան տալ, թէ իբր «այդ ինքն ըստ ինքեան հասկանալի է» կամ «այդ մասին յետոյ կը տեսնենք», «դա երկրորդական խնդիր է» և այլն, և այլն, այդ պարագայում լաւ իմացէք, որ դա մի խարդախ է, որի բերանը չը պէտք է մատդ դնես։

VI

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻ ԵՂԱՆԱԿԸ

Երբ խօսք է լինում ընտրողական իրաւունքի մասին, միշտ ասում են, որ այդ իրաւունքը պէտք է լինի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի։ Առաջին երեք ձևերը մենք արդէն բացատրեցինք, այժմ զբաղվենք չորրորդ ձևով, այն է թէ՝ ինչ է նշանակում գաղտնի քուէարկություն։

Այդ նշանակում է, որ ոչ ոք չը պէտք է իմանայ, թէ քուէարկողը ումն է տալիս իր ձայնը։ Այդ բանը անհրաժեշտ է նրա համար, որ ընտրողները ազատ կերպով կարողանան ընտրել այնպիսի պատգամաւորներ, որոնց իրանք են իսկապէս ցանկանում։ Երբ քուէարկությունը գաղտնի չէ, ազատություն երբէք չէ լինում, որովհետև քուէարկողները միշտ վախենում են իրանց տեղերից. ազքատ գիւղացին հողատէր աղնուականի վրէժխնդրությունից

է վախենում, բանտորը վախենում է գործից զրկվել, գործակատարը իր տեղից, չինովնիկը պաշտօնից և այլն, և այլն, այնպէս որ վերջի վերջոյ ընտրողները քուէարկում են ոչ թէ այնպէս, ինչպէս իրանց խիղճն է թելադրում, այլ ինչպէս որ նրանց թելադրում են վարչութիւնը և կամ իրանց աղաները։

Կան մարդիկ, որոնք կեղծ ժողովութիւն են յայտնում գաղտնի քուէարկութեան դէմ, խրոխտաբար ասելով, թէ՝ ամեն ոք քաջութիւն պիտի ունենայ իր համոզումները բացարձակապէս արտայայտելու։ Դրանք, ի հարկէ, շատ գեղեցիկ խօսքեր են, բայց և այնպէս ոչ մի արժէք չունեն։ Պէտք է չը մոռանալ երբէք, որ միլիոնաւոր մարդիկ ապրում են սոսկալի աղքատութեան, խաւարի և տգիտութեան մէջ. իրանց ողորմելի օրապահիկից զրկվելու սպառնալիքը, գործատէրերից ու վարչական մարմիններից կախումն ունենալը չափազանց մեծ է, որպէսզի նրանք համարձակութիւն ունենան իրանց «համոզումները բացարձակապէս արտայայտելու»։ Ամենից առաջ անհրաժեշտ է ժողովրդի մէջ քաղաքացիական քաջութիւն մշակել, հարկաւոր է որ մարդիկ սովորեն քաղաքացիներ զգալ իրանց։ Իսկ դա հեշտ բան չէ։ Առայժմ այդպիսի քաղաքացիական քաջութիւն ունեցողների թիւը շատ սակաւ է, ուստի, բացարձակ քուէարկութիւն պահանջելով, ոչ թէ ժողովրդի մէջ քաղաքացիական քաջութիւն չի մշակվի, այլ ընդհակառակը նրա խիղճը կանարատյականացնվի, որովհետև ժողովրդի մեծ մասը ստիպված պէտք է լինի հակառակ իր խղճի ու կամքի քուէարկել։ Իսկ այդ ձևով, այսինքն՝ վարչութեան և աղաների թելադրութեամբ ընտրված պատգամաւորները այնպիսի օրէնքներ կը մշակեն, որոնք աւելի ևս արգելք կը դառնան ժողովրդի ընդհանրութեան գիտակցութեանը և քաղաքացիական զգացումները զարգացնելուն, որովհետև իշխանաւորներն ու հարուստները շատ լաւ գիտեն, որ եթէ

ժողովուրդը զարգանայ ու ըմբռնէ իր դասակարգային շահերը, նրանց տիրապետութեանն ու գերիշխանութեանը շատ շուտով վերջ կը դրվի։

Վերջապէս ուրիշներին քաղաքացիական քաջութեան քարոզներ խօսողներին ու խրոխտացողներին կարելի է ասել. եթէ ձեր ճառերը անկեղծ են, բարեհաճեցէք քաջութեան և ազատութեան օրինակ ցոյց տալ։ Ապացուցէք, որ դուք երբէք չէք ծռվել ուժեղի ու հարուստի առաջ, որ դուք միշտ համարձակ ու անվախ կերպով բողոքել էք, երբ ձեր աչքի առաջ անարդարութիւն է գործադրվել։ Ասացէք, թէ դուք վատ կը վերաբերվէք այն գործարանատիրոջը, որը գործից կը զրկէ ազատ կերպով քուէարկող բանուորին, թէ դուք այդպիսի գործարանատիրոջը ձեռք չէք մեկնի, երես կը դարձնէք նրանից, անազնիւ մարդ կը յայտարարէք նրան, ձեր շրջանից դուրս կը վռնդէք։ Ինչ չէ այնպիսի բանուորների կամ ծառայողների թիւը, որոնք իւրաքանչիւր օր թշուառութեան են մատնվում իրանց համարձակ, ազատ խօսքի, տէրերին անհաճոյ վարմունքների համար, սակայն դեռ չէ տեսնված, որ գէթ մի մարդ այդպիսի տէրերին, որոնք, օգտվելով իրանց դիրքերից, ճնշում են բանեցնում իրանց ենթակաների խղճի վրա, անարդէր և թոյլ չը տար պատուաւոր հասարակութեան մէջ մտնելու նրանց։ Եւ քանի որ այդպիսի բաներ չը կան, ուրեմն կեղծաւորութիւն է խեղճ ժողովրդին այնպիսի «քաջութեան» քարոզներ խօսելը, որից հէնց իրանք քարոզողները շատ զուրկ են։ Չէ կարելի ասել, թէ այդ կարգի քարոզները միայն ագիտութեան հետևանք են. շատ անգամ դրանց տակ նենգամիտ ձգտումներ են թագնված, այն է՝ աշխատաւոր ժողովրդի քուէարկութիւնը ենթարկել գործատէրերի և կառավարութեան հսկողութեանը, որպէս զի նրանք չը կարողանան ազատ կերպով ընտրութիւններ կատարել։ Արտասահմանում

քիչ չեն այնպիսի օրինակներ, երբ գործարանատէրերը բանուորներին քուէարկութիւններին են ուղարկում իրանց վերակացուի ղեկավարութեամբ։ Եւ վայ այն բանուորին որ կը համարձակվի քուէարկել ոչ այնպէս, ինչպէս որ հաճելի է գործարանատիրոջը։ Այդպիսի համարձակներին ասում են. «աղնուութիւնը լաւ բան է, բայց և այնպէս հէնց վաղը արի հաշիւդ տացիր։»

Ամեն կերպ պէտք է պահանջել, որ քուէարկութիւնը գաղտնի լինի։ Այդպիսով միայն ժողովուրդը հնարաւորութիւն կունենայ չը ծռմռել իր խիղճը, ընտրել իր ուզած մարդուն և պաշտպանել իր շահերը։

Բայց ինչպէս անելու է, որ քուէարկութիւնը իրապէս գաղտնի լինի։

Մենք արդէն խօսել ենք, թէ ինչ եղանակներով են ընդհանրապէս ընտրութիւնները կատարվում. ընտրողական տոմսակի վրա նշանակվում է այն թեկնածուի անունը, որին ընտրողը կամենում է քուէ տալ։ և ապա այդ տոմսակը նա դցում է քուէտուփի մէջ ընտրողական բիւրօի ներկայութեամբ։

Բայց ահա թէ այս դէպքում ինչպիսի հարց է առաջանում։ Ընտրողական տոմսակի վրա թեկնածուի անունը նշանակելու համար չէ՞ որ գոնէ պէտք է կարդալ իմանալ, մինչդեռ շնորհիւ միապետական կարգերի, Ռուսաստանի ժողովրդի կէսից աւելին անգրագէտ է։ Ի՞նչպէս պէտք է վարվեն ուրեմն անգրագէտները։ Եթէ թոյլ տալ, որ անգրագէտի տեղ մի ուրիշը գրէ, այն ժամանակ քուէարկութեան գաղտնիքը երևան կը գայ, իսկ եթէ թոյլ չը տալ, նրանք չեն կարողանայ քուէարկել և այդպիսով ժողովրդի կէսից աւելին կը զրկվի քուէարկելու իրաւունքից։

Դրա համար, սակայն, ելք կայ և մի շատ հասարակ ելք։ Հարկաւոր է որ ամեն մի թեկնածուի ներկայացնող կուսակցութիւն իրաւունք ունենայ իր ընտրողական տոմսակները տպագրել, և որ իւրաքանչիւր

կուսակցութեան տոմսակները մի առանձին և յատուկ գոյնի լինեն։ Որչափ կուսակցութիւններ կամ թեկնածուներ կան, այնչափ էլ բազմագոյն տոմսակներ կը լինեն. կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, սպիտակ և այլն։ Եւ ոչ մի կուսակցութիւն իրաւունք չը պէտք է ունենայ մի այլ կուսակցութեան ընտրած գոյնը գործածել։

Նախօրօք բոլորն էլ պէտք է իմանան, թէ ո՞ր գոյնը ինչ թեկնածու է նշանակում։ Այդ ժամանակ անգրագէտն էլ կարող է առանց ուրիշի օգնութեան քուէարկել, բաւական է միայն, որ նա գիտենայ, թէ ո՞ր գոյնը՝ որ կուսակցութեանն է վերաբերում։ Ի հարկէ, իւրաքանչիւր ընտրողին պէտք է տրվի ամեն գոյնի տոմսակներից էլ, իսկ թէ նա որ գոյնի տոմսակով կօգտվի, այդ իր գաղտնիքն է. այդ մասին ոչ ոք չը պէտք է իմանայ։

Այստեղ դարձեալ մի նոր հարց է առաջ գալիս. չէ՞ որ մենք ասացինք, թէ ընտրողական տոմսակը քուէատուփի մէջ պիտի գցել բիւրօի աչքի առաջ, որպէսզի միևնոյն մարդը չը կարողանայ միաժամանակ մի քանի տոմսակ գցել։ Ուրեմն, եթէ տոմսակները տարբեր գոյների են, բիւրօն իսկոյն կը նկատի, թէ ընտրողը ինչ գոյնի տոմսակ է գցում և, հետևապէս, կիմանայ, թէ նա ո՞ւմն է բուէ տալիս։ Որպէս զի այդպիսով քուէարկութեան գաղտնիքը երևան չը գայ, մի շատ պարզ միջոց է հնարված։ Քուէարկելուց առաջ ընտրողը մի առանձին սենեակ է մտնում, ուր նրա տրամադրութեան տակ նախօրօք և ձրիաբար անթափանցիկ ծրարներ են դրված լինում։ Այդ սենեակում ընտրողը, մնալով բոլորովին միայնակ, իր ընտրած գոյնի տոմսակը այդ ծրարներից մէկի մէջ է դնում, փակում է և ապա դուրս է գալիս և ընտրողական բիւրօի աչքի առաջ գցում է քուէատուփի մէջ։ Այս եղանակով քուէարկութեան գաղտնիքը կատա-

բելապէս ապահովուած կը լինի և անդրադէտների համար։ Միևնոյն ժամանակ անհնարին կը լինի մէկից աւելի տոմսակ գցելը, որովհետև ամենքն էլ գիտեն, որ ամեն մի ծրարի մէջ մէկ հատ տոմսակ պիտի լինի միայն։

Այս բոլոր պայմանները լինելով հանդերձ, դարձեալ պէտք է ընտրութիւնների ամբողջ ժամանակ շատ լուրջ կերպով հսկել, որ զանազան կեղծիքներ չը կատարուեն։ Ոմարց համար անհաւատալի կը թուեն, որ հարուստները ու դիրք ունեցող մարդիկ ստոր կեղծիքներով ու խարդախութիւններով պարապեն, սակայն եւրոպական երկրներում հազարաւոր անգամ դրանց ագենտներին բռնել են՝ ընտրութիւնների ժամանակ գաղտագողի նայելիս, ականջ դնելիս, ընտրողներին կաշառելիս, հարբեցնելիս և այլն։ Այս բոլորը աչքի առաջ ունենալով, ժողովրդի գիտակից տարրերը, նամանաւանդ գիտակից բանուորները իրանց վրա պիտի վերցնեն՝ ժողովրդի թշնամիների կողմից լարված բոլոր դաւերին հսկելու պարտականութիւնը և ականջներն ու աչքերը խիստ սուր պահեն։ Հէնց որ մի բան նկատեն, իսկոյն պիտի պահանջեն ընտրողական բիւրօից՝ արձանագրութիւն կազմել, որպէսզի յետոյ հնարաւորութիւն ունենան ապացուցանելու, թէ ընտրութիւնները անկանոն են կատարուել և որ անհրաժեշտ է նոր ընտրութիւն նշանակել։

Ահա և մենք վերջացրինք նկարագրել, թէ ինչպէս պիտի վարուել, որ ընտրողական իրաւունքները իրապէս լինեն «ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի»,

Եթէ բանուորները ցանկանում են իրանց իրաւունքները պաշտպանել, նրանք պէտք է անգիր իմանան այն բոլոր խարդախութիւնները, որ կարող են անել նրանց դէմ ժողովրդի թշնամիները։ Եւ ոչ միայն պիտի անգիր իմանալ մեր բոլոր պատժածները, այլ և, ինչպէս ասացինք, և հսկել ընտրութիւններին ամբողջ ժամանակ, որպէս զի ուրիշ նոր բան չը հնարեն

խարդախութեան մէջ կատարելագործութեան հասած վարպետները։ Ճիշտ է, դա մի քիչ դժուար ու ատղտկալի գործ է, բայց վերջը տես թէ հրպիսի ուրախութիւն կը լինի, երբ, քո գիտակցութեան ու աշխարջութեան շնորհիւ, թոյլ չես տայ, որ քո և քո դասակարգի շահերը ջնջված լինեն։

VII

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Սահմանադիր ժողովի համար պատգամաւորներ ընտրելու վերաբերեալ իրաւունքի և եղանակների մասին մենք համարեա թէ բոլորը ասացինք։ Այժմ մ ղ մնում է խօսել պատգամաւոր ընտրելու իրաւունքի մասին, որ մենք անուանում ենք կրաւորական—պասիվ ընտրողական իրաւունք։ Ճանկանալով այսպէս կամ այնպէս ժողովրդին թոյլ չը տալ իր ցանկացած և իսկական ներկայացուցիչներին ընտրելու, յաճախ աշխատում են սահմանափակել կրաւորական ընտրողական իրաւունքը, այնպէս որ ընտրելու իրաւունք ունեցողներից բոլորն էլ հաւասարապէս միաժամանակ իրաւունք չեն ունենում և ընտրվելու։ Պատգամաւորական թեկնածու լինելու համար զանազան կարգի սահմանափակումներ են որոշվում—նիւթական կարողութեան, ուսման աստիճանի, տարիքի և այլն չափերով։

Այդ բոլոր սահմանափակումներն էլ, ի հարկէ, դարձեալ ծածկվում են մի շարք բարեացակամ դատողութիւններով, այն է թէ՝ իբր ժողովրդի կողմից ընտրվածները պէտք է որ ջահելներ չը լինեն, փորձված լինեն, ապահով լինեն և այլն և այլն։ Իբր թէ այդ դէպքում միայն նրանք կարող են խելացի օրէնքներ մշակել։ Այդ կարգի բոլոր դատողութիւնները, բոնցով աշխատում են արդարացնել կրաւորական

ընտրական իրաւունքի սահմանափակումը—մի բացարձակ խեղաթիւրումն է։ Ժողովուրդը երբեմն չէ և նա օրէնքներ մշակելու համար չի ընտրիլ այնպիսի մարդիկ, որոնք անհասկացող և անընդունակ են։ Չէ՞ որ նրանց մշակած օրէնքները հէնց նոյն ժողովրդի համար են լինելու։ Պարզ է ուրեմն, որ ժողովուրդը, առանց անկոչ խնամակալների էլ, շատ լրջութեամբ և զգուշաւոր կերպով կը վերաբերվի ընտրական գործին։ Այսքանը—ընտրվողների ջահելութեան և ուսեալ լինելու մասին։ Իսկ ինչ վերաբերում է հարստութեան աստիճանով ընտրվելու իրաւունքը սահմանափակելուն, այդ մասին, ի հարկէ, խօսք էլ չի կարող լինել։ Սահմանադիր ժողովում նստած պատգամաւորների ոչ թէ հարստութիւնն է ժողովրդին պէտքական, այլ նրանց գլուխը։ Մինչև իսկ, եթէ կուզէք, աւելի շուտ կուշտն է, որ քաղցածի դրութիւնը չէ կարողանում հասկանալ։ Հետևապէս քաղցածները չը պէտք է թոյլ տան, որ սատիպեն իրանց ճակատագիրը կուշտերին յանձնել։

Ուրեմն, պէտք է ժողովուրդը պահանջէ, որ ընտրվելու իրաւունքն էլ ընդհանուր լինի, որ ամեն մի քաղաքացի, այր թէ կին, հարուստ թէ աղքատ, ուսեալ թէ անուս, հայ թէ թուրք, հրէայ թէ ռուս՝ բոլորն էլ իրաւունք ունենան իրանց քաղաքացիների կողմից պատգամաւոր ընտրվելու։ Միայն այդ ժամանակ ժողովրդի ընտրութիւնը իսկապէս ազատ կը լինի։

Բայց հեշտ է ասելը. ամեն մարդ իրաւունք ունի ընտրվելու։ Կընտրեն, օրինակի համար, բանուորին կամ աղքատ ինտելիգենտին։ Ի՞նչպէս նրանք թողնեն իրանց աշխատանքը, որի հաստոյթով իրանց ընտանիքին ապրեցնում են, ի՞նչպէս նրանք գնան գուցէ հազարաւոր վերստ հեռու մայրաքաղաքը, որտեղ սահմանադիր ժողովը պիտի գումարվի, ի՞նչպէս ապրեն այնտեղ ամբողջ ժամանակ մինչ ժողովի նիստերը կը շարունակվեն։ Ամենքին յայտնի է, թէ որչափ նեղու-

թիւններ են կրում այն գիւղացիները, որոնք գիւղական կամ դատարանական գործերով քաղաք են գնում մի քանի օրով։ Բայց գիւղացիների դրութիւնը համեմատաբար դեռ լաւ է, որովհետև նրանք դեռ էլի իրանց տնտեսութիւնը ունեն, օրավարձի յոյսով ապրողներ չեն։ Իսկ երբ մէկը այսօր ապրում է նրանով, ինչ որ վաստակել է երէկ, այդպիսի մարդու համար մի քանի ամսով, սահմանադիր ժողովին մասնակցելու նպատակով, հեռանալ պարզապէս սովամահ լինել է նշանակում։

Այսպէս ուրեմն, եթէ սահմանադիր ժողովում կատարվող աշխատանքը չը վարձատրվի, այն ժամանակ, թէկուզ օրէնքով ամեն մարդ էլ իրաւունք ունենայ պատգամաւոր ընտրվելու, այնուամենայնիւ ժողովուրդը ստիպված պէտք է լինի միմիայն կարողութեան տէր մարդոց ընտրելու, չքաւորները ստիպված կը լինեն հրաժարվել սահմանադիր ժողովում աշխատելուց։ Իսկ այդ այն կը նշանակէ, որ բանւորներն ու աղքատ գիւղացիք ստիպված կը լինեն իրանց ուղած մարդու փոխարէն աղաներին ընտրել, այն աղաներին, որոնք իրանց շահերով միանգամայն հակառակ են իրանց ընտրողներին և ուրեմն ամեն կերպ պէտք է աշխատեն մշակվող օրէնքներով նրանց զրկել։

Այդ է պատճառը, որ բոլոր երկրների բանւորական կուսակցութիւնները հաւասարապէս պահանջում են, որ պատգամաւորները պետութիւնից ռոճիկ ստանան, այնպիսի ռոճիկ, որ թէ նրանց և թէ նրանց ընտանիքին կատարելապէս ապահովացնէր և միջոց տար նրանց իրանց ամբողջ ոյժերը նուիրելու այն գործին, որի համար նրանք ընտրված են։ Միայն լաւ ռոճիկ վճարելու դէպքում ամեն մարդ իրապէս կարող է պատգամաւոր ընտրվել և ոչ թէ միայն թղթի վրա։ Եւ հէնց այդ է պատճառը, որ թէ կառավարութիւնները և թէ հարուստները ամեն կերպ աշխատում են՝ թոյլ չը

տալ ժողովրդի ընտրած պատգամաւորներին ոռճիկ նը-
շանակվի։ Այդ եղանակով նրանք յոյս ունեն բանւոր-
ներին պարլամենտ չը թողնել և, զանազան բարերա-
բութիւններով (պաշտօններ, կապալներ և այլն) և կամ
ուղղակի կաշառքներով, շարունակ իրանց ձեռքումը
պահել այն պատգամաւորներին, որոնք զուրկ են սե-
փական կարողութիւնից և կարօտ՝ մի որ և է վաստակի։

Ի հարկէ, այս տմարդի ու շահասիրական հա-
շիւներն էլ միշտ գեղեցիկ ու ազնիւ խօսքերի քողով
են ծածկվում։ Ասում են, որ իւրաքանչիւր մարդ իր
համար պատիւ պէտք է համարի ժողովրդին անվճար
ծառայելը, որ ոռճիկ ստանալը ստորացնում է պատ-
գամաւորին, որ պատգամաւորները պէտք է խնայեն
ժողովրդի «արիւն քրտինքով վաստակած կօպէկները»,
ուստի և չը պէտք է վարձ ստանան իրանց աշխատան-
քի համար և այլն և այլն։ Բայց այս բոլոր կեղծաւոր
առարկութիւններին շատ հեշտ է պատասխանելը. եթէ
ժողովրդին «ձրի» ծառայելու մասին արտասանած ձեր
ճառերը անկեղծ են, այն ժամանակ բարեհաճեցէք, պ.
պ. չինովնիկներ, հրաժարվել այն հազարաւոր բուբլիա-
նոց ոռճիկներից, որ դուք ստանում էք միայն նրա
համար, որ իբրև տգրուկներ կպել էք ժողովրդի վզին։
Կը բարեհաճէք արդեօք դուք, պարոն գործարանատէ-
րեր, այլևս չը քամել բանւորների արիւն քրտինքով
վաստակած կօպէկները, և դուք, պարոն կալուածատէ-
րեր, չը քերթել այլևս գիւղացիների կաշին։ Մի քանի
անգամ այսպիսի հարցեր տուէք այդ անկոչ բարե-
բարներին և նրանք իսկոյն իրանց ձայնը կը կտրեն։
Այդ մարդիկ երբէք «ժողովրդի կօպէկների» մասին չեն
մտածում, երբ նրա գրպանից հարիւրաւոր միլիոններ
են դուրս քաշվում կերակրելու համար այն բազմաթիւ
չինովնիկներին, տէրտէրներին, գործարանատէրերին ու
կալուածատէրերին, որոնք միշտ ժողովրդի աշխատան-

քով են ապրում, բայց նրանք անագին վայնասուն են բարձրացնում, երբ ժողովուրդը ցանկանում է իր սեփական գործի համար կոպեկներ ծախսել։ Նոյնպէս և նրանք սաստիկ գանգատվում են ժողովրդի «շռայլութեան» մասին, երբ բանւորը մի քիչ մաքուր է հագնվում, պապիրոս է ծխում կամ շղթայով ժամացոյց է կրում, իսկ, իրանք նոյն ժողովրդի ջանից հանած փողերով, առանց խղճահարութեան, հազարներ են ծախսում իրանց վրա. ամենաթանկագին հագուստներ են հագնում, արտասահմանեան գինիներ են խմում, թանկագին սիգարներ ծխում, պալատներում ապրում, երկու-երեք տեղ սիրուհիներ պահում, նրանց մետաքսութաւիշ հագցնում, թանկագին ակնեղէններով զարդարում...։ և այդ ժամանակ «արիւն-քրտինքով վաստակած» կոպէկները բոլորովին ժռացվում են։

Ոչ, եթէ բանւորները ցանկանում են պատգամաւորներ ընտրել ոչ թէ փողի, այլ գլխի տէր մարդոց, եթէ ցանկանում են, որ իրանց պատգամաւորները միջոց ունենան իրանց ամբողջ ժամանակը նուիրել սահմանադիր ժողովի աշխատանքին և մանրամասն կերպով ուսումնասիրեն ժողովում յարուցված բոլոր հարցերը, որպէսզի օրէնքի մի որ և է խճճված յօդուածով ճնաս չը հասցնեն շահագործված ժողովրդի շահերին, եթէ նրանք ցանկանում են, որ իրանց պատգամաւորները անկախ մարդիկ լինեն և ստիպված չը լինեն չինովնիկներից ու փողային տուղերից շնորհներ ու բարիքներ ակնկալել,—այդ պարագայում նրանք պէտք է անպատճառ պահանջեն, որ պատգամաւորներին լաւ ռոճիկներ նշանակեն։

Մենք արդէն ասացինք, որ բոլոր բանւորական կուսակցութիւնները այդպիսի ռոճիկ պահանջում են։ Այդ բանին նամանաւանդ ձգտում են գերմանական բանւորները, բայց և այնպէս գերմանական կառավարութիւնը յամառ կերպով միշտ մերժում էր այդ պահանջը

կատարել։ Նեղը ընկած գերմանական կայսրը վերջը սկսեց «արիւն քրտինքով վաստակած կոպէկների» կեղծաւոր առարկութիւնները մէջ բերել և ապա ուղղակի յայտարարեց, թէ ինքը կը համաձայնի պատգամաւորներին ռոճիկ տալուն այն դէպքում միայն, եթէ պարլամենտը իր կողմից կը համաձայնի, որ ընդհանուր ընտրողական իրաւունքը սահմանափակվի։ Այդ առարկութիւնով կայսրը մի անգամից ցոյց տուեց, թէ ինչու բանւորների համար այնքան կարևոր է պատգամաւորներին ռոճիկ նշանակելը։ Եւ որովհետև գերմանական պարլամենտը չը համաձայնեց փոփոխութեան ենթարկել ընդհանուր ընտրողական իրաւունքը, ուստի գերմանական պատգամաւորներն էլ մինչև այս տարի ռոճիկ չէին ստանում։ Այնուամենայնիւ գերմանական բանւորները չէին ցանկանում պատգամաւորներ ընտրել հարուստներից, ուստի նրանք ստիպված էին սեփական միջոցներ չունեցող սոցիալ դեմոկրատ պատգամաւորների (թւով 81) ռոճիկի համար ծախսել տարեկան ամենի քան 20,000 ռուբլի բանւորական կուսակցութեան կասայից։

Բայց չը պէտք է միայն բանւորական պատգամաւորներին ռոճիկ նշանակել։ Այդ դէպքում հարուստները ամէն կունենան դրանց առաջ պարծենալու, ասելով, որ տեսէք, ահա մենք «անշահասիրութեամբ» ենք աշխատում «ժողովրդի օգտի համար», իսկ դուք վարձկաններ էք, ռոճիկ էք ստանում։ Յայտնի բան է, որ բոլոր դատարկապորտները, որոնք ուրիշի աշխատանքի շահագործութեամբ են ապրում, միշտ «արհամարում» են նրանց, ով վարձով է աշխատում և այդպիսով միջոց տալիս այդ ազրուկներին զեղխութեան ու կատարեալ անգործութեան մէջ ապրել և իրանց մարդկային բարձր ցեղի արարածներ համարել։ Որպէսզի այդ կարգի պարծենկոտութիւն չը կարողանայ տեղի ունենալ, պէտք է պահանջել, որ բոլոր պատգամաւորները, առանց նիւթա-

կանի խարութեան, միաձեռակ ոռճիկ ստանան։ Թէև դա մի քիչ աւելորդ ծախսեր կը պահանջի, բայց և այնպէս չը պէտք է թոյլ տալ որ մի որ և է ոսկու պարկ բարձրից նայէ խեղճ բանւոր պատգամաւորի վրա։ Բացի դրանից՝ վատ չի լինի այդպիսով և հասկացնել այն աղաղաղաներին, որոնք կարծում են, թէ օրէնքներ մշակելով իրանք մի «բարիք» են անում ժողովրդին,—որ օրէնսդիրները ոչ այլ ինչ են, եթէ ոչ՝ ժողովրդի ծառաները, որոնք իրանց յանձնված աշխատանքի համար վարձ պէտք է ստանան։ Իսկ եթէ ժողովրդին ծառայելը նրանք ժարդուս ստորացնող բան են համարում, սովորած լինելով միայն արքունիքում լակէյի ծառայութեան և բնական ձեռքից ողորմութիւններ ստանալուն, այն ժամանակ թող նրանք ժողովրդի գործերին իսկի չը խառնվեն, բարի ճանապարհ։

Պատգամաւորներին նիւթապէս ապահովելն էլ դեռ բաւական չէ։ Հարկաւոր է, որ նրանք ամեն կերպ ապահովված լինեն, որ նրանց ոչ ոք չը խանգարէ իրանց յանձնված օրէնսդրական աշխատութիւնը ազատ կերպով կատարել, զեկավարվելով միայն իրանց խղճով ու համոզումներով։ Իսկ դրա համար ամենաէական և առաջին պայմաններից մէկն է պատգամաւորների անձի անձեռնմխելիութիւնը։ Ոչ ոք իրաւունք չը պէտք է ունենայ ձերբակալել պատգամաւորին, առանց հէնց իր, սահմանադիր ժողովի որոշման։ Ոչ ոք իրաւունք չը պէտք է ունենայ պատգամաւորին պատասխանատուութեան ենթարկել նրա, ժողովում արտասանած, ճառերի համար։ Պատգամաւորներին խօսքի կատարեալ ազատութիւն պէտք է տրվի։

Եւ որովհետև պատգամաւորները ժողովրդի ծառաները պէտք է լինեն, ուստի ժողովրդին էլ կատարելապէս միջոց պէտք է տրվի իմանալու այն բոլորը, ինչ որ անում են նրա ընտրած ներկայացուցիչները։ Սահմանադիր ժողովի նիստերը պէտք է տեղի

ունենան բաւական ընդարձակ շինութեան մէջ և պէտք է դռնբաց լինեն։ Հասարակութեան աչքի առաջ անկարելի կը լինի որ և է աչառ կամ կրքոտ վերաբերմունք, և պատգամաւորների ազատութիւնն էլ չի կաշկանդվի։ Եւ ամենից աւելի ժողովում խօսքի ազատութիւնը պահպանված լինելու կարիք ունեն բանւորական պատգամաւորները, որովհետև ամենից շատ հէնց նրանց ճառերն է, որ յաճախ դուր չեն գալիս միւս բոլոր ունեւոր դասակարգերի պատգամաւորներին։ Եթէ ուրեմն, ժողովի նիստերը դռնփակ լինեն, պարզ բան է որ բանւորական պատգամաւորներին ամեն կերպ պէտք է կաշկանդեն։

Որպէսզի ժողովուրդը միջոց ունենայ իր պատգամաւորների աշխատութիւններին լաւ հսկել, ժողովի նիստերի դռնբաց լինելն էլ դեռ բաւական չէ. այդ նիստերին կարող են գնալ ներկայ գտնվել մի քանի հարիւր մարդ և այն էլ այն քաղաքի բնակիչներից, որտեղ սահմանադիր ժողովն է գտնվում։ Իսկ բանւորները այդ նիստերին կարող են գնալ միայն իրանց անգործ ու պարապ ժամանակները։ Գործի ժամանակ ո՞վ կարող է գնալ։ Մինչդեռ ժողովում կատարվող բոլոր գործերի ու խնդիրների մասին պէտք է տեղեկութիւն ունենայ, ամբողջ երկրում ապրող, բազմամիլիոն ժողովուրդը։ Դրա համար էլ սահմանադիր ժողովի նիստերի մասին պէտք է մանրամասն տեղեկութիւն տրվի ամբողջ ժողովրդին։

Սահմանադիր ժողովի նիստերի լիակատար զեկուցումները ազատ կերպով և առանց կրճատումների պէտք է տպագրվեն բոլոր լրագրներում, ծախվեն և ձրի բաժանվեն։ Եւ որպէսզի կառավարութիւնը չը կարողանայ այդ զեկուցումների մէջ զեղծումներ կատարել, պէտք է որ սահմանադիր ժողովի սրահում բաւականին ընդարձակ տեղ յատկացնվի բոլոր լրագիրների ներկայացուցիչների համար, որոնք կը ցան-

կանան իրանց աշխատակիցներին ուղարկել։ Եւ այդ լրագրական զեկուցումները չը պէտք է ոչ մի ցենզուրայի ենթարկվեն, այլ պէտք է տպագրվեն ու տարածվեն բոլորովին ազատ կերպով։

Ահա այս բոլոր պայմանները կատարվելով միայն ժողովուրդը կարող է վստահ լինել, թէ իր պատգամաւորները իրապէս հնարաւորութիւն ունեն իրանց աշխատութիւնը ազատ կերպով առաջ տանելու, և միևնոյն ժամանակ նա կարող է ուշի ուշով հսկել պատգամաւորների գործունէութեան վրա։

VIII

ԻՆՉՊԷՍ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎ

Մենք վերջացրինք այն բոլոր պայմանների նկարագրութիւնը, որ անհրաժեշտ են սահմանադիր ժողով հրաւիրելու համար, մի ժողով, որը իրապէս համաժողովրդային լինի։ Միայն այն ժամանակ ժողովուրդը կարող է սահմանադիր ժողով ուղարկել իրապէս իր ցանկացած մարդոց և այն ժամանակ միայն պատգամաւորները իրապէս կարող են և պէտք է որ գործեն իրանց ընտրողների ցանկութեան համաձայն, երբ կատարելապէս ապահովվաց կը լինի ընդհանուր, հաւասար, ուղղակի և գաղտնի քուէարկութիւնը, ինչպէս և ընտրվելու ընդհանուր իրաւունքը, երբ ապահովված կը լինի նաև պատգամաւորների անձեռնմխելիութիւնը և նրանց գործունէութեան վրա հսկելու կարելիութիւնը։

Պարզ բան է որ, կատարելապէս ազատ գործունէութիւն ունենալու համար, համաժողովրդային սահմանադիր ժողովը պէտք է լինի երկրի միակ և լիակատար իրաւունքներով օժտված տէրը։ Այդ ժողովին պէտք է ենթարկվեն բոլոր մինիստրներն ու չինովնիկները։ Նրա ձեռքում պէտք է լինեն պետական փողերի տնօրէնութիւնը և զօրքի զեկավարութիւնը, և

նրա բոլոր կարգադրութիւնները պէտք է անժիջապէս գործադրվեն։

Շատ պարզ է, որ այդպիսի համաժողովրդային սահմանադիր ժողով չեն ցանկանայ գումարել ոչ կառավարութիւնը, ոչ մինիստրները և ոչ էլ ամբողջ բիւրոկրատիան։ Ծուղակի մէջ ընկած օձի նման նրանք շարունակ կը դալարվեն, որպէսզի կարողանան իրանց ձեռքում գոնէ մի քիչ իրաւունքներ պահպանել ու թոյլ չը տալ, որ ժողովրդի կամքը պետութեան մէջ լիակատար տէր դառնայ։ 1905 թ. յունվարի 9-ին Պետերբուրգի բանւորները գնում էին Թագաւորի մօտ խնդրելու, որ նա սահմանադիր ժողով հրաւիրէ։ Եւ այդպիսի մի բան խնդրելն արդէն բաւական էր, որ ամբողջ բիւրոկրատիան ոտքի կանգնէր և անխնայ կերպով կոտորել տար անզէն ժողովրդին։ Առանց տատանվելու պրոլետարիատի արիւնից հեղեղատներ կազմել տուեցին, որպէսզի կարելի լինի հէնց արմատից խեղդել սահմանադիր ժողով հրաւիրելու առելի պահանջը։ Սահմանադիր ժողովը բիւրոկրատիայի համար մահ է, իսկ ինչ նրա համար մահ է, այն էլ ժողովրդի բարիքն է։ Հէնց դրա համար էլ պէտք է համաժողովրդային սահմանադիր ժողովը ձեռք բերել հակառակ բիւրոկրատիայի կամքի և ոչ թէ նրա միջոցով։

Պէտք է շարունակ հաստատել ամենքին և իւրաքանչիւրին, որ բիւրոկրատիան երբէք չէ կարող ժողովրդի շահերի պաշտպան լինել, ուրեմն և նա երբէք չի համաձայնի յօժար կամքով ժողովրդին լիակատար ազատութիւն տալ և համաժողովրդային սահմանադիր ժողով հրաւիրել։ Այդ ազատութիւնը ժողովուրդը կարող է միայն ձեռք բերել իր համերաշխ և յանդուգն գործունէութեամբ և շատ լուրջ աշխատանքով։

Իսկ այն, թէ արդեօք սահմանադիր ժողով գումարել տալու աջողութիւնից յետոյ ժողովուրդը ո՞ւմ կընտրի և կուղարկի իր շահերը պաշտպանելու, իր կարիքների մասին հոգ տանելու,—դա, ի հարկէ, կախված կը լինի այն հանգամանքից, թէ արդեօք ինչպէս

ինքը ժողովուրդը կըմբռնի իր շահերը, որ ասոիճան զարգացած կը լինի նրա քաղաքական գիտակցութիւնը։

Երբ բանւորների դասակարգային գիտակցութիւնը զարգացած չէ, նրանք շատ հեշտութեամբ ծուղակի մէջ են ընկնում և պատգամաւորներ են ընտրում ամեն կարգի ազազազաններ, որոնց համար բոլորովին օտար են պրոլետարիական շահերը, մինչդեռ սահմանադիր ժողովում պիտի վճռվեն բանւորներին վերաբերեալ ամենաէական խնդիրները։

Առ այժմ բանւորները երազել անգամ չեն կարող, թէ սահմանադիր ժողովի պատգամաւորների մեծամասնութիւնը պրոլետարիատի դասակարգային շահերի արտայայտողներ կը լինեն։ Թէև բանւորները մեծ ոյժ են կազմում պետութեան մէջ, միախմբված են մեծ քաղաքներում, ուր երկրի քաղաքական կեանքն է կենտրոնացած, և հէնց դրա համար էլ նրանք— բանւորները—ազատագրական շարժման առաջաւոր գունդն են կազմում և ամենամեծ ծանրութիւնը իրանց ուսերի վրա են կրում, բայց և այնպէս նրանք չնչին փոքրամասնութիւն են կազմում։ Ռուսաստանում բանւորների թիւը 3—4 միլիոն է միայն, այն ինչ բոլոր բը նակիչների թիւը 130 միլիոնից աւելի է։ Բազմամիլիոն գիւղական տարրի մէջ շատ քիչերը կան, որ հէնց այժմեանից հասկանան թէ միայն բանւոր դասակարգն է, որ իր կուռվ ուզում է բաղդաւորութիւն ու ազատութիւն ձեռք բերել ամբողջ մարդկութեան համար։ Այդ դեռ բաւական չէ՝ հէնց բանւորներից էլ շատերը դեռ չեն գիտակցում իրանց դասակարգային շահերին։ Մինչդեռ ընդհանուր ձայնաւորութեան իրաւունք ունենալու դէպքում, ամբողջ ժողովուրդը հաւասարապէս պէտք է մասնակցէ բուէարկութիւններին և, ի հարկէ, այդ բոլոր անգիտակից տարրերը սխալ ընտրութիւններ կը կատարեն։ Բնական է ուրեմն, որ բանւորական պատգամաւորները չեն կարող մեծամասնութիւն կազմել սահմանադիր ժողովում։

Բայց եթէ գիտակից բանւորները չեն կարող հէնց առաջին անգամից մեծամասնութիւն կազմել, պէտք է գոնէ մեծ ոյժով աշխատեն, որ բանւորական պատգամաւորները կարելիին չափ շատ թւով լինեն։ Դրանից կախված կը լինի ժողովում նրանց ոյժն ու նշանակութիւնը։

Ուրեմն, սահմանադիր ժողով պահանջելով հանդերձ, պլօբետարիատի գիտակից տարրերը պէտք է չը մոռանան, որ ամենից առաջ անհրաժեշտ է ամեն տեղ և ամենուրէք թէ բանուորներին և թէ ամբողջ ժողովրդին յորդորեն ընտրելու այնպիսի պատգամաւորներ, որոնք աշխատաւոր ժողովրդի շահերը կը պաշտպանեն։ Պէտք է բացատրել բոլոր բանուորներին և ժողովրդի միւս աշխատաւոր տարրերին, թէ նրանք չը պէտք է անտարբեր մնան դէպի երկրի ցաւերը, հարկաւոր է նրանց բացատրել իրանց դասակարգային դրութիւնը, այն թշւառութեան ու շահագործութեան պատճառները, որոնք անվերջ ճնշում են, պիտի ցոյց տան նրանց այն ճանապարհը—դասակարգային կռուի ճանապարհը, որ քաղաքական ազատութեան միջոցով տանում է դէպի տնտեսական կատարեալ հաւասարութիւն, դէպի սոցիալիզմի պայծառ թագաւորութիւնը։ Հարկաւոր է օրէց-օր ուշադրութեամբ հետևել բոլոր կատարվող դէպքերին, բոլոր միւս դասակարգերի ու կուսակցութիւնների գործունէութեանը, հարկաւոր է սովորել մի այնպիսի հաստատ ճանապարհ գտնել, որով պէտք է ընթանայ պրոլետար դասակարգը դէպի իր ազատութիւնը, և այդ ձեռք բերված գիտութեան և դասակարգային գիտակցութեան լոյսը սփռել բոլոր խաւար ու ոգէտ եղբայրների վրա։

Պէտք է դիմել բոլոր ժողովրդին, թէ քաղաքային և թէ գիւղական թշւառներին, և բացատրել նրանց, որ միմիայն սոցիալիզմի թագաւորութիւնը վերջ կը դնէ ամեն մի թշւառութեան ու շահագործութեան, իսկ սոցիալիզմին հասնելու համար պէտք է անցնել մի շատ երկար ու դժուարին ճանապարհ, լի անձնուէր կռիւներով։ Այդ ճանապարհը պրոլետարիատի կռուի ճանապարհն է։ Ով ուզում է ճնշումից և զրկանքից ազատվել, թող երբէք չը մտածէ իր կաշին ազատել նրանով, որ կաշխատի անձնական բարեկեցութիւն հաստատել իր մի կտոր հողի վրա, իր սեփական խանութում կամ արհեստանոցում։ Շահագործութեան, բռնութեան ու հարստահարութեան հիմունքների վրա հաստատված կապիտալիստական կարգերը իրանց անգութ ճիրաններով միշտ պէտք է սպառնան՝ խլել նրանից իր հալալ աշխատան-

քով ստեղծած անձնական բարեկեցութիւնը։ Ով արդարութիւն, ազատութիւն ու հաւասարութիւն է ցանկանում, նա պէտք է կանգնէ այն ճանապարհի վրա, որով պրոլետարիատ դասակարգն է գնում, նա պէտք է իր կռիւը միախառնէ պրոլետարիատի դասակարգային կռի հետ և նրա հետ միասին ձեռք բերէ ընդարձակ քաղաքական ազատութիւն, հիմնված սոցիալիստական սկզբունքների վրա, որից յետոյ միայն լայն ճանապարհ կը բացվի սոցիալիզմի թագաւորութեանը դիմելու։

Բայց ոչ միայն թշուառներին ու շահագործվածներին դիմելու է, այլ և այն բոլոր ունեւոր դասակարգերին, որոնք ազատութիւն են ցանկանում։ Ամենքին էլ բացատրելու և հասկացնելու է, որ ով ուզում է միապետական բիւրոկրատիայի ստորացնող լուծը թոթափել, ով ցանկանում է ազատ քաղաքացի լինելուն համար թանգ է ազատ կերպով մտածելու, խօսելու, ժողովներ գումարելու, միութիւններ և ընկերութիւններ կազմելու, ասենց բիւրոկրատիայի միջամտութեան արդիւնագործական և առեւտրական գործեր սկսելու և այլն, և այլն քաղաքացիական ազատ իրաւունքը, նա ոչ մի ջանք չը պիտի խնայէ համաժողովրդային սահմանադիր ժողով ձեռք բերելու համար, այնպիսի մի ժողով, որը ազատ կերպով ընտրված լինի բնդհանուր հաւասար, ուղղակի և գաղտնի քուեարկութեամբ։

Որչափ յաճախ, շարունակական և ուժգին կերպով տարվի այս ագիտացիան, այնչափ աւելի կը զարգանայ բանւորների դասակարգային գիտակցութիւնը և աւելի յաւ հասկանալի կը դառնայ ամբողջ ժողովրդի համար պրոլետարիատի ազատագրական մեծ գերը։ Այդ ժամանակ և աւելի մեծ հաւանականութիւն կարող է լինել, որ ժողովուրդը սահմանադիր ժողովին կուղարկէ այնպիսի պատգամաւորներ, որոնք իրապէս նրա շահերի արտայայտիչներ կը լինեն և որոնք վերջ կը դնեն միապետական բիւրոկրատիայի անզուգական թագաւորութեանը և կը հաստատեն Ռուսաստանի ամբողջ ժողովրդի կամքը արտայայտող մի օրինական և արդարադատ կառավարութիւն։